

**<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Սևանի N4 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի**

2023-2028 թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Նախաբան -----	3
2.Զարգացման ծրագրի կառուցվածքը-----	5
3.Հաստատության գործունեությունը-----	6
4.Իրավիճակի վերլուծությունը,ուժեղ և թույլ կողմերը. Դպրոցի շենքային պայմանները-----	16
5.Դպրոցի նյութատեխնիկական բազան -----	17
6. Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները-----	20
7.Դպրոցի համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ-----	26
8.Դպրոցի ուսումնական միջավայրը-----	27
9. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները-----	29
10.Կրթության որակը-----	31
11.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը,բյուջետային հնարավորությունները-----	35
12.Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները-----	39
13.Դպրոցում առկա հիմնախնդիրները-----	41
14.Դպրոցի գործունեության նպատակներն ու խնդիրները-----	42
15.Սահմանված նպատակները,խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան գործողությունները,ակնկալվող արդյունքները,պատասխանատուները(կատարողները), ժամկետները և իրականացման համար անհրաժեշտ միջոցները,արդյունքների գնահատման չափանիշները-----	43
16.Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները,վերահսկողության մեխանիզմները-----	60

ՆԱԽԱԲԱՆ

Նորացող հասարակությունն իր պահանջներն է առաջադրում հանրակրթության համակարգին՝ ուսուցման բովանդակության ու դրա վերջնարդյունքների առումով: Դպրոցն այսօր կանգնած է ուսուցման հումանիտար բովանդակությունը, մարդասիրական արժեքները և սովորողների քաղաքացիական գիտակցությունը ձևավորելու, հասարակության փոփոխվող պայմաններին սովորողների հարմարվելու, ներառական կրթական միջավայրի ձևավորման, ուսումնական առարկաների՝ յուրաքանչյուր աշակերտին հասցեագրված ուսուցման-դաստիարակման ներուժն ավելի հզորացնելու և լիարժեք իրագործելու անհրաժեշտության առջև:

Մասնավորապես այդ նպատակներն են հետապնդում հանրակրթության պետական նոր չափորոշիչի, առարկայական ծրագրերի և չափորոշիչների ձևավորման ու հաստատման գործընթացները և Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում դրանց ներդրման անհրաժեշտությունը:

Ուսուցման համակարգը դաստիարակության, ուսուցման և կրթության միասնական ամբողջություն է:

Կրթական համակարգը սոցիալական պատվերի համաձայն կարևորում է, թե հասարակությունը վաղը ի՞նչ քաղաքացի է ուզում ունենալ:

Կրթության, դաստիարակության նպատակներն ու խնդիրները ուսումնասիրելիս՝ հետևյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտություն է ծագում.

- ի՞նչ նպատակով ենք սովորեցնում,
- ի՞նչ ենք սովորեցնում,
- ո՞ւմ ենք սովորեցնում,
- ինչպե՞ս ենք սովորեցնում
- ի՞նչ պայմաններ ենք ստեղծում սովորողների ուսուցման և ուսումնառության որակը բարելավելու համար:

Կյանքի և միջավայրի անընդհատ փոփոխման պայմաններում պահանջվում է նաև դպրոցի կառավարման ձևերի փոփոխություն, որն անհնար է առանց նորամուծությունների ներդրման, իսկ դա իր հերթին պահանջում է նորամուծությունների կառավարում: Մա շատ կարևոր գործընթաց է, որ այսօր մեկնարկել է և ներդրվում է պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում :

Դպրոցն արձագանքում է հասարակական, այդ թվում՝ գիտական և մշակութային փոփոխություններին, որի ընթացքում նրանում ձևավորվում է նոր միջավայր: Այդ փոփոխություններին համահունչ՝ անհրաժեշտություն է առաջանում դպրոցում ևս ներդնել նորարարական մոտեցումներ, որտեղ կարևոր է համապատասխան ուղղությունների որոշումն ու հիմնավորված ռազմավարության մշակումը: Հենց այդ ռազմավարությունն էլ դրվում է

դպրոցի տեսլականի հիմքում ,որը կանխորոշելու է դպրոցի վաղվա օրը:

Նորամուծությունների ընտրությունը բխում է դպրոցի կարիքների վերհանումից, որոնք ոչ միայն արդեն կան, այլև առաջիկայում են հայտնվելու:

Դպրոցի զարգացման մոտեցումներում նախընտրելի է համակարգային կառավարումը՝ հիմնված լայն մասնակցային քննարկումների վրա:

Դպրոցի զարգացման արդյունավետությունը պայմանավորված է՝

- Հեռանկարային ուղղությունների, նպատակների և խնդիրների սահմանման հիմքում՝ ունենալով <<Կրթության զարգացման պետական ծրագիրը>>,
- Հանրակրթության պետական նոր չափորոշի առարկայական չափորոշիչների ու ծրագրերի դրույթներով և պահանջներով առաջնորդվելը,
- Կարիքների լուծման համար եղած հնարավորությունների բացահայտմամբ,
- Դպրոցի արդի խնդիրների ամբողջական ընդգրկմամբ,
- Զարգացման նպատակների ընտրությամբ,
- Նպատակների զուգակցմամբ,
- Խնդիրների լուծման իրատեսական քայլերի որոշմամբ,
- Մանկավարժական կազմի և աշակերտական համակազմի շահագրգռվածության ապահովմամբ,
- Դպրոցի զարգացման գործընթացի հսկելիությամբ,
- Ծնողների և համայնքի ակտիվ մասնակցությամբ և աջակցությամբ,
- Դպրոցական այնպիսի բարենպաստ մթնոլորտի ձևավորմամբ, որտեղ մանկավարժները, աշակերտները, ծնողներն ու ղեկավարները համատեղ աշխատում են՝ ի շահ երեխայի և ստեղծում այնպիսի դպրոցական միջավայր և մշակույթ, որը բնութագրվում է համագործակցությամբ, գեղագիտությամբ, բարեկրթությամբ և ինքնակարգապահությամբ,
- Հանրակրթության պետական նոր չափորոշի ներդրմամբ հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովմամբ,
- Դպրոցի հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմամբ, գործունեության թափանցիկության ապահովմամբ,
- Կրթական ծառայությունների որակի համապատասխանության և կրթական գործընթացի արդյունավետության մասին կրթական գործընթացի մասնակիցներին և հասարակությանն իրազեկմամբ,

● Սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերի ապահովմամբ,

● Մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների օպտիմալ գնահատմամբ:

<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի 2022-2028 թվականների զարգացման ծրագիրը կազմվել է հաշվի առնելով դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները, դպրոցի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ծրագիրն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները.

1. Հաստատության գործունեությունը.
2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը.
3. Նպատակների և խնդիրների սահմանումը.
4. Մահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.
4. Նպատակների և խնդիրների սահմանումը.
5. Պատասխանատուները.
6. Արդյունքների գնահատման չափանիշները.
7. Ռիսկերը.
8. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց >>
ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն է.

Հաստատության հասցեն՝

Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Չարենցի 2

Հաստատության հեռախոսահամար, էլեկտրոնային հասցեն՝

0261-2-41-22, E-mail: sevan4@schools.am

Հաստատության ինտերնետային կայքի հասցեն՝

<https://sevan4.schoolsite.am/>

Դպրոցը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2002թ. դեկտեմբերի 3-ին, վկայական՝ 03Ա.055694, գործունեության ժամկետը՝ անժամկետ, կազմակերպությունը հանդիսանում է <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոց>> պետական հիմնարկի իրավահաջորդը:

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Սևանի տարածքային բաժնի կողմից՝ 03.12.2002թ.-ին, գրանցման թիվ՝ 35.210.00969, կանոնադրության մեջ թիվ 001/2 փոփոխությունը գրանցված է՝ 16.09.2010 թ.-ին, նոր խմբագրությամբ՝ 09.11.2017 թ.-ին, նոր փոփոխությունները և լրացումները գրանցվել է՝ 08.01.2020 թ.-ին):

Դպրոցը ըստ կրթական մակարդակների իրականացնում է հետևյալ հանրակրթական ծրագրերը՝ ըստ համապատասխան սահմանային տեղերի՝

Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան հանրակրթական ծրագիր -200 սահմանային տեղ, լիցենզիա՝ N 0417

Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան հանրակրթական ծրագիր-250 սահմանային տեղ, լիցենզիա՝ N 0410

ա) Ի՞նչ կրթական կարիքների է այն բավարարելու.

- Յուրաքանչյուր սովորողի համար բարենպաստ կրթական միջավայրի ապահովումով, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, կրթության

անհատականացմամբ, ուսուցման և ուսումնառության գործընթացին մասնակցելու համար հավասար հնարավորությունների և մատչելիության ապահովմամբ նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները, կարևորելով ներառական կրթությունը, ընդառաջ գնալով սովորողների նախասիրություններին՝ ապահովելով նրանց մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերումը, մասնագիտական կողմնորոշումը, սեփական դիրքորոշում ունեցող, հայրենասեր, բազմակողմանիորեն զարգացած, համամարդկային արժեքներ կրող անձի ձևավորումը,

- Դպրոցի ներառական կրթական միջավայրի ստեղծումով նպաստել ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) ներգրավվածությանը իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացում,
- Պահպանել սովորողների ու աշխատակազմի համար ուսումնադաստիարակչական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպելով առողջության պահպանման և ամրապնդման համար միջոցառումներ (այդ թվում՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները),
- Նպատակային ուսուցողական ծրագրեր իրականացնելու միջոցով՝ սովորողների շրջանում ձևավորել անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններ ու հմտություններ (այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին տիրապետում, ուսումնական վարժանքների իրականացում),
- Սովորողների ֆիզիկական, հոգևոր առողջությանը միտված ուսումնադաստիարակչան ծրագրերի և միջոցառումներ (այդ թվում՝ արատավոր երևույթները կանխարգելելու համար),
- Երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքներում ծնողների պարտականությունների նկատմամբ պատասխանատվությա բարձրացման, հոգեբանական կամ ֆիզիկական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումների իրականացում,
- Ապահովել սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը, նրանց մասնակցությունը մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներին, մարզական և մշակութային մրցույթներին մասնակցությունը,
- Մանկավարժական կազմի մասնագիտական չափանիշների կատարելագործման միջոցառումներ (վերապատրաստումներ, ատեստավորումներ՝ այդ թվում ներառական կրթության թեմաներով),
- Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհրդի գործունեություն, որի ներկայացրած առաջարկություններն

արտացոլելու են սովորողների կարիքները՝ փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության պայմաններում,

- Ծնողական խորհրդի գործունեություն (համագործակցություն տնօրինության, մանկավարժական, աշակերտական խորհուրդների, դպրոցի խորհրդի հետ), որի ներկայացրած առաջարկությունները արտացոլելու են ծնողների կարիքները փոխադարձ վստահության, աջակցության և իրազեկվածության առումով,
- Դպրոցի ու համայնքի համագործակցություն (համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածություն և նրանց մասնակցությունը համայնքային աշխատանքներին, համայնքի բնակիչների համար միջոցառումների կազմակերպում, շաբաթօրյակների կազմակերպում, ծառատունկ և այլն),
- Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական աջակցության թափանցիկ ծրագրերի իրականացում,
- Արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների իրականացում (էքսկուրսիաներ, սեմինարներ, քննարկումներ, կինոնկարների դիտում, գրույցներ),
- Դպրոցի կառավարման, ֆինանսատնտեսական գործունեության, գնումների գործընթացների թափանցիկություն, դպրոցի նկատմամբ վստահության ստեղծում,

բ) դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.

Կարծում ենք, որ դպրոցի գործունեության նախանշված ուղղությունները բխում են հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության նպատակներից և սկզբունքներից, այն է՝

- Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորում,
- Համընդհանուր ներառական կրթության հռչակումը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք՝ նպատակաուղղված լինելով կրթության մատչելիության, հավասար մասնակցության և որակի ապահովմանը,
- Հանրակրթության մարդասիրական բնույթը, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման, ազգային և համամարդկային արժեքների առաջնայնությունը, հարգանքը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ,

- Դպրոցի գործունեության հանրամատչելիություն և թափանցիկություն՝ ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովում,
- Սովորողների ու աշխատողների իրավահավասարության ապահովում, ստեղծագործական աշխատանքի խթանում,
- Սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացում ,
- Ուսումնառության և կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավում,
- Կրթական գործընթացում բոլոր շահառուների՝ սովորողների, ծնողների, մանկավարժական և վարչական աշխատողների, խորհրդի և խորհրդակցական մարմինների, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ,պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, համայնքային մասնակցություն:

գ) դպրոցի գործունեության համապատասխանությունը դպրոցի ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Դպրոցի շենքը տիպային է ,երկհարկանի,բաղկացած է 7 մասնաշենքերից,որոնք իրար միացված են միջանցքներով,ունի ավտոտնակ(տրանսպորտային միջոցներ առկա չեն),ենթակայան (շենքերի ընդհանուր մակերեսը՝ 6149.8 ք.մ. է),մրգատու այգիներ՝ 6000 ք.մ. ,մարզահրապարակ,դպրոցամերձ հողամասը (հա)՝ 0.21483:Շենքի նախագծային հզորությունը՝ 825 աշակերտի համար:

Առաջին մասնաշենք - 855.9 ք.մ.

Երկրորդ մասնաշենք – 841.1 ք.մ.

Երրորդ մասնաշենք – 887.1 ք.մ.

Չորրորդ մասնաշենք – 841.1 ք.մ.

Հինգերորդ մասնաշենք – 874.2 ք.մ.

Վեցերորդ մասնաշենք – 855 ք.մ.

Յոթերորդ մասնաշենք – 784.2 ք.մ.

Դպրոցում սովորողների թիվը՝ 308, չի գերազանցում հաստատության լիցենզիաներով սահմանված սահմանային տեղերին՝

Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան հանրակրթական ծրագիր -200 սահմանային տեղ,լիցենզիա՝ N 0417

Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան հանրակրթական ծրագիր-250 սահմանային տեղ,լիցենզիա՝ N 0410

Դպրոցի տարածքը ցանկապատված է,մեկուսացված ավտոճանապարհային երթուղիների գոտուց,աղմուկի,օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող օբյեկտներից,արտակարգ իրավիճակների պարագայում հատուկ նշանակության մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենք-շինություններին, տարածքը մաքուր է ,իրականացվում են աղբահանության և ախտաբանական աշխատանքներ:Մասնաշենքերում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր,միայն մուտքը ունի թեքահարթակ,դռները լայն են,տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն,առկա է տարհանման պլան: Տարհանման պլան-սխեմաները առկա են բոլոր հարկերում ,նախասրահում, սակայն փակցված չեն դասասենյակներում:Դպրոցում կառուցվածքային վտանգներ չկան,հատակները սայթաքուն չեն,առկա են հակահրդեհային միջոցներ,տանիքը պատված է հրակայուն նյութերով:

Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է սահմանված նորմերին:Դպրոցը ունի կենտրոնացված շուրջօրյա ջրամատակարարում,կենտրոնացված կոյուղացում,առկա է էլեկտրամատակարարում և գազամատակարարում,դպրոցը չունի լոկալ ջեռուցում,այն իրականացվում է ըստ դասարանների և առանձին նշանակության տարածքների (ընդհանուր ջեռուցվող տարածքների քանակը՝25, դասասենյակներ՝ 14, ճաշարան՝ 1, ուսուցչանոց՝ 1, բուժկետ՝ 1, առանձնասենյակներ՝ 2, գրադարան՝ 1, առարկայական կաբինետներ՝ 5): Միջանցքները,սանհանգույցները , լաբորատորիաները, արհեստանոցները,մարզադահլիճը ,գրադարաններից երկուսը, դասասենյակներից տասնվեցը,հանդերձարանները և այլ նշանակության տարածքները չեն ջեռուցվում:

Շենք-շինություններ և հարմարություններ.

Շենք-շինություններ և հարմարություններ	Քանակը	Ընդհանուր մակերեսը (մ/քառ.)
Առանձնասենյակներ	15	320
Դասարաններ	30	1810
Առարկայական լսարաններ	4	240
Լաբորատորիաներ	3	220
Արհեստանոցներ	5	300
Մարզադահլիճներ	1	300
Գրադարան	3	131.3
Բուժկետ	1	20
Ճաշարան	1	300

Հանդերձարան	2	90
Մանհանգույց	10(վերանորոգված են)	90
Համակարգիչներ	16	
Համակարգչային այլ տեխնիկա	21	
Հեռախոսներ	1	
Ինտերնետ կապ	առկա է	

Դպրոցը ունի առանձնացված շախմատի, ՆԶՊ (այդ թվում՝ գենքի պահեստ) և համակարգչային դասասենյակներ, ԴԱԿ աշխատասենյակ, հանդիսությունների դահլիճ, աշակերտների համար նախատեսված մասնագիտական կողմնորոշման սենյակ: Մանհանգույցները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ Երեխաների համար(տեղադրված չեն բռնաձողեր), շինությունների ներքին հատվածներում առկա չեն թեքահարթակներ:

Թեև դպրոցում ԿԱՊԿՈՒ Երեխաներ չեն սովորում, սակայն դա չի նշանակում, որ վաղը դպրոցը ԿԱՊԿՈՒ Երեխաներ չի ունենալու, այսինքն՝ դպրոցը ֆիզիկական և մանկավարժամեթոդական առումներով պետք է պատրաստ լինի՝ ստեղծելով հարմարեցված միջավայր:

Դպրոցում չի գործում հրդեհաազդարարման ինքնաշխատ և ներքին հրդեհաշիջման, օդափոխության համակարգեր, ջրհորդանները՝ էլեկտրական տաքացման համակարգ չունեն, չկա ներքին հեռախոսակապ, վթարային լուսավորության համակարգ, ներքին ռադիոկապ : Նշված որոշակի ենթակառուցվածքների բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դպրոցը հիմնանորոգման կարիք ունի (տանիք, պատուհաններ, դռներ, դասասենյակներ և այլն):

Դպրոցի անձնակազմը.

Պաշտոններ	Աշխատողների թիվը	Դրույքների թիվը
Տնօրեն	1	1
Տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ	1	1
Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	1	1
Ուսուցիչներ	29	19.7
Սովորողների հետ դաստիարակչական	2	1.5

աշխատանքների կազմակերպիչ		
Զինդեկ(քաղ.պաշտ. շտաբի պետ)	1	1/0.5
Ուսուցչի օգնական	4	2.5
Հաշվապահ	1	1
Գրադարանավար	1	1
Գործավար	1	1
Լաբորանտ	1	1
Հնակարգչային օպերատոր	2	1.5
Հավաքարար	3	3
Պահակ	3	3
Տնտեսվար	1	1
Խոհարար	1	1
Վառարան վառող(ջեռուցման ժամանակաշրջանում)	1	0.5
Բուժքույր(Սևանի ԲԿ-ի աշխատող)	1	0,75

Տվյալներ ուսուցչական անձնակազմի որակական ցուցանիշների մասին

Ցուցանիշ	Թիվ	Տոկոս
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ	28	96.5%
Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ	1	3.4%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ	29	100%
Տարակարգ ունեցող ուսուցիչներ	2	6.8%
Վերապատրաստում անցած ուսուցիչներ	29	100%
Վերապատրաստող ուսուցիչներ	2	6.8%
Ուսուցիչների միջին տարիքը	51	

Սովորողների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի (2023թ.-ի հունվարի 16-ի դրությամբ)	Դինամիկան(աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	323	319	308	նվ.
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	321	308	308	կայուն
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	3	4	0	նվ.
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	5	16	0	նվ.

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով

Դասարանների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Դինամիկան(աճ կամ նվազում)
1-ին դաս.	2	1	2	աճ
2-րդ դաս.	1	2	1	նվ.
3-րդ դաս.	2	1	2	աճ
4-րդ դաս.	1	1	1	կայուն
5-րդ դաս.	2	1	1	կայուն
6-րդ դաս.	2	2	1	նվ.
7-րդ դաս.	2	2	2	կայուն
8-րդ դաս.	2	2	2	կայուն
9-րդ դաս.	1	2	2	կայուն
Ընդամենը	15	14	14	կայուն

Սովորողների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի (2023թ.-ի հունվարի16-ի դրությամբ)	Դինամիկան(աճ կամ նվազում)
1-ին դաս.	38	31	35	աճ
2-րդ դաս.	24	37	29	նվ.
3-րդ դաս.	36	26	35	աճ
4-րդ դաս.	32	31	25	նվ.
5-րդ դաս.	42	32	31	նվ.
6-րդ դաս.	41	41	30	նվ.
7-րդ դաս.	45	43	40	նվ.
8-րդ դաս.	37	42	42	կայուն
9-րդ դաս.	28	36	41	աճ
Ընդամենը	323	319	308	նվ.

Համեմատական վերլուծություն դպրոցի ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշների մասին՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար

Ցուցանիշներ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Դինամիկան(աճ կամ նվազում)
Սովորող/ուսուցիչ հարաբերակցությունը	11.1	10.6	10.2	նվ.
Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերակցությունը	24.8	24.5	23.6	նվ.
Դասարանների միջին խտությունը	21.5	22.8	22	նվ.
Մեկ սովորողի հաշվով դպրոցի տարեկան նախահաշիվը	209550	212940	234900	աճ
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	85746	98889	98889	կայուն

Ուսուցիչների միջին աշխատավարձը	113944	110862	104071	նվ.
Վարչական աշխատողների միջին աշխատավարձը	171333	171333	171333	կայուն

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Դպրոցը տիպային, երկհարկանի քարե շենք է՝ միմյանց փոխկապակցված են 7 մասնաշենքերով, ունի ավտոտնակ, ենթակայան՝ բոլոր շինությունների ընդհանուր մակերեսը՝ 6149.8 ք.մ. է, շենքի նախագծային հզորությունը՝ 825 աշակերտի համար:</p> <p>Շենքը շահագործման է հանձնվել 1976թ.-ին,</p> <p>2. Դպրոցի տարածքը ցանկապատված է և վտանգ չի ներկայացնում սովորողների տեղաշարժի համար,</p> <p>3. Մեկուսացված է ավտոճանապարհային գոտուց, օդի աղտոտման աղբյուր հանդիսացող օբյեկտներից,</p> <p>4. Մաքուր կանաչապատ տարածք՝ դպրոցի հետնամասում մրգատու այգիներով</p> <p>5. Շենքերում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր,</p> <p>6. ԿԱՊԿՈՒ սովորողների համար թեքահարթակի առկայություն մուտքի կողմից</p> <p>7. Բոլոր հարկերում առկա են թվով 10 առանձնացված և վերանորոգված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար, ինչպես նաև առանձնացված սանհանգույց աշխատակազմի համար, որոնք ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով</p> <p>8. Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով,</p> <p>9. Դպրոցում առկա է ճաշարան, (խոհանոց, սննդի պահեստ) վերանորոգված է և համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին, ապահովված է համապատասխան նոր գույքով, սարքավորումներով (գազօջախ, սառնարան, էլեկտրական ջրատաքացուցիչ, չժանգոտվող մետաղյա դարակաշարեր և այլն),</p> <p>10. Առկա է բուժկետ և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն,</p> <p>11. Դպրոցն ունի ընդարձակ սպորտհրապարակ,</p>	<p>1. Դպրոցի շենքը ընթացիկ վերանորոգման կարիք ունի, մասնավորապես տանիքի, հին դռների և պատուհանների փոխարինում նորով (որը ջերմության ապահովման կարևոր գործոններից է),</p> <p>2. Սանհանգույցները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաների համար, սանհանգույցներում տեղադրված չեն բռնաձողեր, շինությունների ներսի աստիճանաձև հատվածներում և ետնամասի դեպի դուրս բացվող բացվող պահուստային ելքերում չկան թեքահարթակներ ,</p> <p>3. Դպրոցը ապահովված չէ լոկալ ջեռուցման համակարգով և ջեռուցման ամիսներին միջանցքներում, սանհանգույցներում, սպորտդահլիճում և այլ առաջնային նշանակության տարածքներում ջերմաստիճանը չի համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմերին,</p> <p>4. Սպորտդահլիճը վերանորոգման կարիք ունի (պատեր, առաստաղ, հատակ, պատուհանների փոխարինում, ջեռուցման բացակայություն),</p> <p>5. Միջոցառումների դահլիճը չի ջեռուցվում,</p> <p>Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգ կառուցելու համար (1ք.մ.-ի արժեքը 12000-17000 դրամ) միջին հաշվարկներով անհրաժեշտ է 87 մլն. դրամ գումար: Դասասենյակների մեծ մասը, լաբորատորիաները, գրադարանային սենյակները, վարչատնտեսական նպատակներով օգտագործվող սենյակները ունեն վերանորոգման կարիք:</p>

<p>12. Շենքերն ապահովված են ջրահեռացման համակարգով,</p> <p>13. Առարկայական՝ ՆԶՊ, շախմատի, ինֆորմատիկայի, մասնագիտական կողմնորոշման թվով 4 կաբինետների առկայություն, թվով 3 գրադարանների առկայություն(ընթերցասրահներով),</p> <p>14. Թվով 5 արհեստանոցների առկայություն,</p> <p>15. Թվով 3 առանձնացված քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ,</p> <p>16. Միջոցառումների ընդարձակ դահլիճ:</p>	
--	--

ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Գրադարանային ֆոնդում առկա է 7096 կտոր գրքեր, որոնցից --գեղարվեստական՝ 5502, --տեղեկատվական(բառարաններ, ատլասներ, հանրագիտարաններ)՝ 271, --ուսումնամեթոդական գրքեր՝ 966, --ամսագրեր՝ 957: Վերջին անգամ գրադարանային ֆոնդը համալրվել է նոր գրականությամբ 2016 թ.-ին: Գեղարվեստական նշանակության գրադարանային սենյակում առկա է ընթերցասրահ՝ 30 նստատեղերով,</p> <p>2. Համակարգչային ընդարձակ վերանորոգված դասասենյակ ,առկա են 10 համակարգիչ, 5՝ տպիչ, 1՝ ծրիչ, այլ նշանակության համակարգչային տեխնիկա 21,</p> <p>3. Առանձնացված և կահավորված ՆԶՊ դասասենյակում առկա են հեռուստացույց՝ 1, DVD՝ 1, ցուցադրական վահանակ, դիդակտիկ նյութեր, սարքավորումներ, հակագազեր,</p> <p>4. Մետաղամշակման և փայտամշակման արհեստանոցներում առկա են ֆրեզերային՝ 1, խառատային՝ 1, շաղափող՝ 2, ֆուգանող՝ 2, փայտամշակման՝ 1, էլեկտրասրաքար՝ 1, էլեկտրական կլորասող՝ 1 և այլն:</p> <p>5. Սպորտդահլիճում սպորտային նոր գույք և սարքավորումներ:</p>	<p>1. Գրադարանային սենյակներում առկա չեն համակարգիչներ, էլեկտրոնային ռեսուրսների պակաս, գրադրանավարության հատուկ համակարգչային ծրագրի բացակայություն,</p> <p>2. Նոր սերնդի համակարգիչների (այդ թվում՝ դյուրակիր համակարգիչների) կարիք,</p> <p>3. Էլեկտրոնային գրատախտակների բացակայություն,</p> <p>4. Քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի լաբորատորիաների գույքը, սարքավորումները, նյութերը հնացած են, ֆիզիկապես գտնվում են մաշված և ոչ սարքին վիճակում,</p> <p>5. Բնագիտության և աշխարհագրության ուսուցման համար համապատասխան դիդակտիկ պարագաներ:</p>

№	Անվանումը	Քանակը
1	Դաշնամուր	1
2	Բազմոց	6
3	Զգեստապահարան	2
4	Գրադարակներ	25
5	Գրապահարան	26
6	Կիթառ	1
7	Մինթեզատոր	1
8	Աշխատանքային սեղան	30
9	Գրատախտակներ	67
10	Համակարգչային սեղաններ	10
11	Աշակերտական սեղաններ	200
12	Աշակերտական աթոռներ	450
13	Շախմատի սեղան-աթոռի կոմպլեկտ	16
14	Կիսափափուկ աթոռներ	68
15	Համակարգչային աթոռներ	4
16	Չիրկիզվող պահարան	3
17	Երաժշտական կենտրոն	1
18	Ակարդեոն	2
19	Ուսուցչական սեղաններ	35
20	Հաստոցներ	8
21	Էլեկտրական սրաքար	2
22	Հաստոց-կլորասղոց	1
23	Դազգահներ	7
24	Հիդրավլիկ մամլիչ	1
25	Տպիչ	4
26	Համակարգիչ	16
27	Այլ նշանակության համակարգչային տեխնիկա	21
28	Ինտերնետային-թվային խցիկ	1
29	Հեռուստացույց	3
30	Տեսաձայնարկիչ	2
31	DVD	1
32	Դիապրոեկտոր	7
33	Նվագարկիչ	10
34	Աուդիո համակարգ	1
35	Սառնարան	3
36	Էլեկտրական ջրատաքացուցիչ	1
37	Ֆոտոապարատ	1
38	Հեռադիտակ	1
39	Ֆիզիկայի լաբորատորիայի կոմպլեկտ	1
40	Կարի մեքենա	10
41	Ուսումնական մանեկեն	6
42	Զուգափայտ	1

43	Մարմնամարզական նժույգ	3
44	Բասկետբոլի շիթ	2
45	Սպորտային կոմպլեկտ	1
46	Շվեդական պատ	2
47	Մարմնամարզական ներքնակ	2
48	ՆՋՊ ֆոտոպլակատ կոմպլեկտ	1
49	Քաղ. պաշտ. պրիբոր	1
50	Կինոապարատ	2
51	Ռադիոընդունիչ	3
52	Գրաֆոպրոեկտոր	2
53	Կոդոսկոպ	2
54	Մագնիտոֆոն	6
55	Էլեկտրատեխնիկական կաբինետ կոմպլեկտ	1
56	Էլեկտրական սարքավորումների կոմպլեկտ	4
57	Էլ. զոդման ապարատ	1
58	Ավտոկաբինետ կոմպլեկտ	1
59	Ավտոտրենաժոր	1
60	Ջեռուցման սարքավորումներ	26
61	Էլեկտրական ջրատաքացուցիչ	1
62	Կենսաբան. լաբորատոր կոմպլեկտ	
63	Քիմիայի լաբորատոր կոմպլեկտ	
Եվ այլ ուսումնական նյութեր և պարագաներ		

2020թ.-ին ՀՊԾ աջակցությամբ դպրոցի ճաշարանը համալրվել է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով(2010 թ.-ից դպրոցի տարրական դասարանների սովորողները ՀՊ ծրագրով ստացել են տաք սնունդ,ներկայումս ծրագիրը շարունակվում է ՀՀ Կառավարության աջակցությամբ <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակներում):

2020 թ.-ին սպորտային դրամաշնորհային ծրագիր շահելու արդյունքում մարզադահլիճը համալրվել է շուրջ 1մլն դրամ արժողությամբ նոր սպորտային գույքով և պարագաներով :

2023թ.-ին <<Հայ Դպրոց>> հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ստացվել են՝ նոր աշակերտական սեղաններ,աթոռներ, գրապահարաններ, ուսուցչական սեղաններ և աթոռներ,գրատախտակներ, հագուստի կախիչներ՝

- 61 կոմպլեկտ փոքր չափի աշակերտական սեղան-աթոռ,
- 32 կոմպլեկտ միջին չափի աշակերտական սեղան-աթոռ,
- 6 հատ ուսուցչական աթոռ,
- 6 հատ ուսուցչական սեղան,
- 12 հատ գրատախտակ,
- 6 հատ գրապահարան միջին չափի,

- 6 հատ կախիչ(12 տեղանոց):

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով ,համաձայն որի՝ դպրոցի կառավարման մարմիններն են՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը,կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը:


<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքում կատարված նոր փոփոխությունների համաձայն՝ այսուհետ հաստատության գործունեության ղեկավարումն իրականացվելու է՝ դպրոցի գործադիր մարմնի՝ տնօրենի (ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգում ու մեթոդական ղեկավարում) և վարչատնտեսական մասի համակարգողի(կամ լիազոր մարմնի պատվիրակած իրավաբանական անձի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով):

Դպրոցում կրթական գործունեությունը արդյունավետ կազմակերպելու համար ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական(խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են դպրոցի կառավարմանը) խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ,որոնց իրավասությունները սահմանված են դպրոցի կանոնադրությամբ: Դպրոցում հոգաբարձուների և այլ խորհուրդներ չեն գործում:

Հարկավոր է խթանել կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը, շատ կարևոր է ,որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում,երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական,դպրոցում էականորեն տուժում են ուսումնադաստիարակչական կառավարման և ղեկավարման գործընթացները, դպրոցը դառնում է փակ, դպրոցում իրականացվող գործընթացները մանկավարժների,սովորողների և համայնքի համար դառնում են անհասկանալի, որի արդյունքում նրանց և դպրոցի միջև առաջանում է անվստահության մթնոլորտ:

Պետք է կարողանալ ճիշտ գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների արդյունավետությունը բարձրացնելու և ձևական գործընթացները դադարեցնելու համար:

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման մարմինները և կազմակերպական կառուցվածքը



ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ՝ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2021թ.-ի մայիսի 10-ի N 245-Ս որոշմամբ հաստատվել է դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի՝ 8 անդամներից բաղկացած կազմը (8-ից 5-ը՝ բարձրագույն, 3-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ), որն ակտիվորեն համագործակցում է տնօրինության և խորհրդակցական մարմինների հետ, գործում է բարեխղճորեն՝ ի նպաստ երեխայի շահերի և կրթության արդյունավետության:

Խորհուրդը գործում է օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան և շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է նախաձեռնություններին:

Անհրաժեշտ է, որ խորհրդի անդամները մշտապես տեղեկացված լինեն հանրակրթության ոլորտի օրենսդրական փոփոխություններին և դրսևորեն ընդհանուր էթիկական արժեքներին և նորմերին համապատասխան վարքագիծ, այն հաշվով, որ խորհրդի անդամները հարգեն կրթական գործընթացի մասնակիցներին, մարդու արժանապատվությունը, լինեն բարեկիրթ, հարգալից և անկողմնակալ իրենց գործառույթներն իրականացնելիս:

Կառավարման արդյունավետությունը պայմանավորված է տնօրինության (նոր կառավարմանն անցնելուց հետո նաև վարչատնտեսական համակարգողի) համագործակցային աշխատանքով, դպրոցի կանոնադրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, բաց և մասնակցային քննարկումների և համատեղ որոշումների կայացման միջոցով, ի շահ դպրոցի, մասնավորապես հետևյալ ուղղություններով՝

- Ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպում, դպրոցի ֆինանսական մուտքերի և դրանց փոփոխությունների կանխատեսում և ծախսերի արդյունավետ բաշխում,
- Ուսումնադաստիարակչական գործունեություն,
- Ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկում, բացթողումների շտկում,
- Բյուջեի նախագծի մշակում և ամենամյա ծախսերի նախահաշվի քննարկում, հավանության ներկայացում,
- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ,
- Դպրոցի կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական կանոնների (աշխատողների և սովորողների վարքագծի կանոններ), ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգի մշակում և հաստատում,
- Աջակցություն զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացմանը, հաշվետվությունների հիման վրա զարգացման ծրագրի ընթացիկ կատարողականների գնահատում, բացթողումների շտկում,

- Շահույթի տնօրինման առաջնային ուղղությունների որոշում,
- Առաջնային կարևորության գույքի, ուսումնական պարագաների ձեռքբերում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մանկավարժական խորհուրդը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<ՊՈԱԿ-ների մասին>> ՀՀ օրենքներով, դպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Մանկավարժական խորհուրդը իրականացնում է դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները (քննարկումներ, որոշումների ընդունում): Իրականացնում է կրթության նորարարական նվաճումների և առաջավոր փորձի ներդրում մանկավարժական պրակտիկայում, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, արտադպրոցական և արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման գործընթացները, առաջարկներ է ներկայացնում դպրոցի ղեկավարությանը կրթական աշխատանքների որակի բարելավման նպատակով: Մանկավարժական խորհուրդը քննարկում է բազմաբնույթ հարցեր, ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, դպրոցի զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրներ, անդրադառնում ընթացիկ հարցերին և ընդհանուր պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Մանկավարժական խորհուրդը համալրված է տարիների փորձառություն ունեցող և որակյալ մասնագետներով, ձևավորված է 41 մանկավարժական աշխատողներից, այդ թվում՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, տնօրենի մասնագիտացված աջակցությունների գծով տեղեկալ, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների 2 կազմակերպիչ, 29 դասավանդող ուսուցիչներ(2-ը՝ 1-ին աստիճանի տարրակարգ ունեցող), զինղեկ(ՆԶՊ ուսուցիչ), 4 ուսուցչի օգնականներ, գրադարանավար, լաբորանտ:

Մանկավարժական խորհրդի 41 անդամներից 40-ը ունեն բարձրագույն, 1-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն, որոնցից՝ հայոց լեզվի և գրականության՝ 3, ռուսաց լեզու՝ 3, գերմաներեն՝ 1, անգլերեն՝ 1, պատմություն՝ 3, մաթեմատիկա՝ 3, ֆիզիկա՝ 1, քիմիա՝ 1, կենսաբանություն՝ 1, ֆիզկուլտուրա՝ 1, ՆԶՊ ուսուցիչ՝ 1, դասվար՝ 7, աշխարհագրություն՝ 1, տեխնոլոգիա և կերպարվեստ՝ 2, ինֆորմատիկա(ներքին համատեղությամբ համակարգչային օպերատոր)՝ 1:

- Մանկավարժական խորհրդի նիստերը պետք է գումարել սահմանված ժամկետներում, անհրաժեշտության դեպքում՝ գումարել արտահերթ նիստեր:
- Ըստ անհրաժեշտության՝ նիստերին մասնակից դարձնել ծնողների, աշակերտական խորհրդի անդամների:
- Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր նոր նիստում անդրադարձ կատարել և քննարկել մանկավարժական խորհրդի նախորդ նիստի կամ նիստերի որոշումների կատարողականը, որի

կատարումը ապահովում է դպրոցի տնօրենը՝ ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

● **Նիստերում քննարկվող հիմնական թեմաներ դարձնել՝** դպրոցի կրթական գործունեության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությունները, ուսումնական ծրագրերի կատարման ընթացքը և արդյունավետությունը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը և արդյունավետ կիրառումը, մեթոդական միավորումների աշխատանքների արդյունավետությունը, դպրոցի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով (այդ թվում՝ մանկավարժական աշխատողների վարքականոններով), ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը, սովորողների առաջադիմության ու վարքի, ուսումնական ծանրաբեռնվածության, սովորողների կրթական կարիքների գնահատումը, ուսուցիչների մասնագիտական զարգացման և այլ մեթոդամանկավարժական, ընթացիկ բացթողումները շտկելու հարցերը, այդ առումով կազմակերպել առանձին խորհրդակցություններ, քննարկումներ, համագործակցել միմյանց հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության բարձրացման համար:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանական ծնողական խորհուրդների նախագահներից, մեկ ուսումնական տարվա համար՝ դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով: Սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության գործում շատ կարևոր է ծնողական խորհրդի դերը:

Ծնողական խորհուրդը (թվով 14 անդամներ, որոնցից 4-ը ունեն բարձրագույն, 8-ը միջնակարգ մասնագիտական, 2-ը միջնակարգ կրթություն) մշտապես իրազեկ է և ակտիվորեն ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում, հաճախակի տնօրինությանը ներկայացնում է ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ առաջարկություններ, մշտապես հետևում է տարրական դասարանների աշակերտներին տրամադրվող անվճար սննդի գործընթացին, դպրոցի սանիտարահիգիենիկ պայմաններին, մասնակցում է սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը, համագործակցում է մանկավարժական, աշակերտական խորհուրդների հետ: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, համաձայն օրակարգային հարցի, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, իսկ դպրոցի կառավարման խորհրդում ներգրավված ներկայացուցիչները խորհրդում մշտապես ներկայացնում են աշակերտների և ծնողների շահերը: Ծնողական խորհրդի նիստերը գումարվում են հստակ օրակարգերով՝ դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի, ուսումնառության որակի, արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքների կազմակերպման և այլ թեմաներով: Ծնողական խորհրդի աջակցությամբ կազմակերպվում են միջոցառումներ (հանդեսներ, ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ):

● **Այսպիսով՝** ծնողների մասնակցությունը համարում ենք դպրոցի գործունեության բարելավման կարևոր գործոն: Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է՝ ծնողների կողմից երեխայի հանդեպ ուշադրությունը, խնամքը, դպրոց երեխայի կանոնավոր հաճախումն

ապահովելը, կարևոր է նաև ծնողների մշտական կապը դպրոցի հետ, ծնողական ժողովներին մասնակցությունը, երեխայի բացակայությունների, առաջադիմության, վարքի, հաջողությունների և խնդիրների մասին իրազեկված լինելու և նրան աջակցելու համար: Շատ կարևոր է նաև երեխայի տնային հանձնարարությունների կատարումը վերահսկելը և աջակցելը: Դպրոցում ծնողների մասնակցության առավել մեծ աստիճանի հասնելու համար կարևոր նշանակություն ունի ծնողների ներգրավվածությունը դպրոցի կողմից որոշումների կայացմանը,

- Ծնողներին ներգրավել դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպման, արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին, ուսումնական լիցենզիայի հարստացմանը,
- Ներգրավել երեխաների արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքներում,
- Ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, կազմակերպել հանդիպումներ, միասին գտնելու խնդիրների լուծման ուղիներ, գործել բաց, թափանցիկ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի աշակերտական խորհուրդը՝ սովորողների ինքնավարության գործադիր մարմինը, որը գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, ձևավորվել է դպրոցի 6-9-րդ դասարանների ներկայացուցիչներից, բաղկացած է 14 անդամներից, որտեղ ներկայանում են բարձր առաջադիմություն, լավ վարք և հետաքրքիր նախաձեռնություններով հանդես եկող աշակերտները:

Աշակերտական խորհրդի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները, որոնք հիմնականում վերաբերում են ուսումնական միջավայրի, ուսումնառության որակի բարելավմանը, ուսումնառության ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին, կեցվածքին, նախաձեռնող են միջոցառումների, ճանաչողական այցերի, շաբաթօրյակների, դպրոցամերձ տարածքի մաքրման և կանաչապատման աշխատանքներին:


Դպրոցի աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը, պետք է՝

- Խթանել սովորողների նախաձեռնությունները, օժանդակել դրանց իրագործմանը,
- Սովորողներին մասնակից դարձնել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերում տնօրինության կողմից որոշումների ընդունմանը,
- Սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնառության ներքին կարգապահական կանոնների մշակմանը,

- Օժանդակել սովորողների կողմից կազմակերպվող միջոցառումներին:

ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ



Դպրոցն իր ամենօրյա գործունեության ընթացքում պետք է համագործակցի համայնքի, կրթամշակութային, առողջապահական հաստատությունների, կրթության կառավարման մարմինների, բնապահպանական կազմակերպությունների, գործարարների, կրթական գործի նկատմամբ շահագրգիռ անձանց հետ.

- Ակտիվացնել համագործակցությունը ԿԳՄՍ նախարարության, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանի, ԱԻ ծառայության, <<Այբ>> կրթական հիմնադրամի և կրթության ոլորտի այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող բազմաբնույթ ուսումնական, ռազմամարզական, գեղագիտական, մշակութային միջոցառումներին,
- Կազմակերպել այցելություններ պատկերասրահներ, կինոթատրոններ, համերգասրահներ, թանգարաններ, զորամասեր, մարզական, առողջարանային, արտադրական կազմակերպություններ,
- Կազմակերպել հանդիպումներ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների, ճանաչված մտավորականների՝ արվեստի և մշակութային գործիչների, գրողների, ազատամարտի վետերանների հետ, որոնք կներկայացնեն իրենց գաղափարներն ու գործունեությունը, կպատասխանեն սովորողներին հուզող հարցերին, խորհուրդներ կտան աշակերտներին, կլսեն նրանց մտքերն ու առաջարկները, ինչը կնպաստի դրական մթնոլորտի ստեղծմանը, կբարձրացնի ուսման որակը և դպրոցի արդյունավետության համար նպաստող գործոն կհանդիսանա:
- Դպրոցի հետ շահագրգիռ բոլոր կողմերի համագործակցությունը, իրազեկվածության աստիճանի բարձրացումը, շենքային պայմանների բարելավման, ուսումնականության բազայի համալրման, զարգացման ուղղությունների նախանշման և զարգացման ծրագրերի խթանումն ապահովելու գործում համայնքի և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը, անշուշտ, կբարձրացնի դպրոցի նկատմամբ հանրային ընկալման աստիճանն ու հեղինակությունը, կնպաստի սովորողների արտադպրոցական ու արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը և կնպաստի դպրոցի զարգացմանը:
- Դպրոցը պետք է գործի՝ որպես մեծ համայնքի անբաժանելի մաս:

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների, առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների, մուլտիմեդիայի, հաստատությունում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջություն է:

Անհրաժեշտ է՝

- Ապահովել դպրոցի ջերմային,օդային,լուսային ռեժիմը,շենքի և տարածքի անվտանգ շահագործումը,պահպանել սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար համապատասխան անվտանգություն և սանիտարահիգիենիկ նորմեր, կազմակերպել առողջության պահպանման համապատասխան միջոցառումներ,ապահովել ԿԱՊԿ ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող հարմարեցված պայմաններ՝ ստեղծելով ներառական կրթական միջավայր,
- Ներառական կրթական միջավայրում՝ կրթական գործընթացը պետք է համապատասխանի կրթական ծրագրերին,ուսումնական նյութերին, ուսուցիչների և սովորողների վերաբերմունքին, որպեսզի երեխայի համար լիարժեքորեն մատչելիություն ապահովվի,
- Ուսումնանյութական բազայի համալրում(ուսումնական,լաբորատոր գույք և սարքավորումներ,համակարգիչներ,էլեկտրոնային գրատախտակներ)
- Իրականացնել սովորողների հոգևոր ,ֆիզիկական,սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ,
- Դասասենյակները ,առարկայական կաբինետները,սպորտդահլիճը,գրադարանը վերանորոգված և կահավորված լինեն նոր գույքով,ուսումնական գրականությամբ,սարքավորումներով և մուլտիմեդիայով,
- Ձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանեն երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
- Ծնողների և սովորողների սոցիալական պատվերը պետք է արտահայտվի դպրոցի ուսումնական ծրագրում,արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում:
- Ստեղծել դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ պայմաններ՝ երեխայի անձի և անհատականության ազատ և համակողմանի զարգացման համար՝ առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը, արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություններ տալ , ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորել, ծնող-դպրոց-համայնք կապը ամրապնդել՝ ձևավորելով բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայր,
- Դպրոցի ուսումնական պլանը պետք է ապահովի պետական և հանրային պատվերի կատարումը,այն պետք է կազմվի՝ ըստ սովորողների կարիքի,
- Ուսումնական առողջ միջավայրի ստեղծման կարևոր գործոններից է՝ դպրոցի աշխատակազմի աշխատաժամանակի ճիշտ ռեժիմը,Ժամային ծանրաբեռնվածությունը,

դասապրոցեսից դուրս դպրոցում իրականացվող աշխատանքներին հասկացվող աշխատաժամանակը, ուսումնական գործընթացի կազմակերպման գործում ճիշտ դասաբաշխումը և դասացուցակի ճիշտ կազմումը՝ հաշվի առնելով սովորողների կրթական կարիքներն ու շահերը, հաստատության առանձնահատկությունները, աշխատակազմի մասնագիտական կարողությունները :

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական համակազմի մասնագիտական, մեթոդամանկավարժական կարողությունների շարունակական որակական աճով, որը անհրաժեշտ նախադրյալ է ուսուցչի ստեղծագործական կարողությունների, մանկավարժական վարպետության, մանկավարժական փորձի անընդհատ զարգացման համար:

Ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պետք է կարողանալ վերլուծել մանկավարժական համակազմի վարքագիծն ու մասնագիտական զարգացման խնդիրները: Ուսուցիչը պետք է գիտակցի, որ ինքը ոչ միայն ուսումնական նյութի փոխանցող է, այլև սովորողի մեջ ուսման նկատմամբ գիտակցական դրդապատճառներ առաջացնող, ուսումնառության գործընթացը խթանող և ուղղորդող անձ: Այդպիսի որակներ ձևավորելու համար կարևորվում է ուսուցիչների և մյուս մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացը և այն ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու խնդիրը:

Վերապատրաստումները պետք է միտված լինեն ուսուցիչների մասնագիտական որակների անընդհատ բարձրացմանը, նոր տեխնոլոգիաների յուրացմանը և դրանք ուսումնական գործընթացում կիրառելու կարողությունների ձևավորմանը: Ուսումնական գործընթացի կազմակերպումը կլինի ավելի արդյունավետ, եթե մեթոդական աշխատանքների իրականացման խնդիրները, բովանդակությունը, կազմակերպման մեխանիզմները հասկանալի լինեն մանկավարժներին:

Ուսուցիչների ատեստավորման գործընթացին նախորդող վերապատրաստումների ընթացքում նրանց իրավական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքներ և գործնական կարողություններ են հաղորդվել:

Բազմաբնույթ վերապատրաստումներ են կազմակերպվել ներառական կրթության, ԱՌԻՊ-ի մշակման, հեռավար ուսուցման կազմակերպման, ՏՀՏ-ների կիրառման և այլ թեմաներով, որոնց մասնակցել են դպրոցի վարչական, ուսուցչական անձնակազմը:

ՀՀ Կառավարության 2023 թ.-ի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման N1 հավելվածով սահմանված են հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության

մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիրը, աշխատանքային գործառնությունները, նրանց գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները և որակավորման նվազագույն պահանջները:

Կարևոր է ,որ յուրաքանչյուր մանկավարժական աշխատող՝ հստակ պատկերացում ունենա իր աշխատանքային գործառնությունների,աշխատանքային պարտականությունների և դրանց կատարման պատասխանատվությունների մասին: Այդ առումով դպրոցում իրականացվող մեթոդական աշխատանքների կարևոր ուղղություններ են.

- Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրմանը նվիրված աշխատանքների կազմակերպում,
- Մասնագիտական քննարկումներ,որոնք կմղեն ուսուցիչներին վերանայելու իրենց մոտեցումները և մտածել աշխատանքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ,
- Խորհրդատվական աշխատանքներ կազմակերպել սկսնակ ուսուցիչների հետ,
- Հանրակրթության նոր չափորոշիչի, առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի, նոր ուսումնական պլանների յուրացման աշխատանքների կազմակերպում,
- Մանկավարժական ընթերցումների, սեմինարների կազմակերպում,
- Ճշտելով ուսուցչի մանկավարժական կարիքներն ու հետաքրքրությունները՝ խթանել ուսուցչի ինքնակրթությանը:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների հետագա շարունակական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Խրախուսել ուսուցիչներին որակավորման տարակարգ ձեռք բերելու համար,
- Խրախուսել ուսուցիչներին մասնակցելու կամավոր ատեստավորման՝ նպատակ ունենալով նախ և առաջ բարձրացնել ուսուցչի,դպրոցի վարկն ու հեղինակությունը,ինչպես նաև ատեստավորման արդյունքով կփոխվի ուսուցչի դրույքչափը և կտրամադրվի հավելավճար,
- Յուրաքանչյուր մանկավարժ ինքնուրույն և ազատ տիրապետի ՏՀՏ գործիքներին, ներդնի և կիրառի իր պրակտիկայում,
- Դպրոցում կազմակերպել հատուկ դասընթացներ ինֆորմատիկայի ուսուցչի, օպերատորների կողմից աշխատակազմի այն անդամների համար,ովքեր ամբողջապես չեն տիրապետում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին,
- Փորձի փոխանակման նպատակով համագործակցել այլ դպրոցների հետ, փորձել ստեղծել միջդպրոցական մեթոդական միավորումներ, մասնագիտական խմբեր,
- Ներդնել սովորողների և աշխատակազմի բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ գովասանագիր, շնորհակալագիր,դրամական խրախուսում՝ այդ գործում ներգրավելով շահագրգիռ անհատների,սոցիալական գործընկերների,տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության որակն արդյունք է այնպիսի ուսումնառության համակարգի, որը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին ու պահանջներին և սովորողներին ապահովում անհրաժեշտ գիտելիքներով, արժեքային համակարգով ու որակներով: Կրթության որակն ուսումնադաստիարակչական գործընթացի համապատասխանությունն է սահմանված նպատակներին ,այն ուսումնական գործընթացի ամբողջ արդյունքն է ,հետևաբար ներառում է սովորողներին, ուսումնական միջավայրը, կրթության բովանդակությունը, որակյալ ուսուցչական կազմը, հմուտ ղեկավարվող ուսումնական գործընթացը, արդար ու արժանահավատ գնահատման համակարգը, ուսուցման վերջնարդյունքները, որոնց վերաբերող ցուցանիշները բնորոշվում են առաջին հերթին աշակերտների առաջադիմությամբ, որն արտահայտվում է նրանց ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով(պետք է նկատել, որ սովորողների առաջադիմությանը վերաբերող ցուցանիշներ են նաև բացակայությունները, դասարանից դասարան փոխադրվելը, կրկնուսույցների մոտ պարապելը, նույն դասարանում մնալը, մրցույթներին և օլիմպիադաներին մասնակցելը, նախնական, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելը):

Իհարկե կրթության որակի ապահովման կարևորագույն չափանիշներ են ուսուցիչների մասնագիտական որակները, ուսուցման գործընթացի մեթոդամանկավարժական արդյունավետ կազմակերպումը:

Հաստատության գործունեության արդյունավետությունը պետք է գնահատել ոչ միայն տվյալ ուսումնական տարվա կտրվածքով, այլ նաև նախորդ ուսումնական տարիների հետ համեմատություններ անցկացնելով՝

**Սովորողների ուսումնառության արդյունքները 2021-2022 ուսումնական տարում՝
ըստ կրթական աստիճանների**

Առարկաներ	Սովորողների թիվը		Տարեկան գնահատականների միջինը		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանում ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Մայրենի	31		8,5		8,4	
Հայոց լեզու		36		6,6		14,3
Մաթեմատիկա	31	36	8,3	6,8	8,5	14,8
Օտար լեզու		36		6,6		7,4
Ֆիզիկա		36		6,9		16
Քիմիա		36		6,9		
Կենսաբանություն		36		7		15
Աշխարհագրություն		36		7		12,6
Հայոց պատմութ.		36		7,2		6,5
Գրականություն		36		6,3		7
Ֆիզկուլտուրա		36		8,9		8,6

4-րդ դասարանում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանում ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկան 2020-2021 – 2021-2022 ուստարիների կտրվածքով

Քննական առարկաներ	Քննությունների միջին միավորների փոփոխությունը՝ ըստ կրթական աստիճանների			
	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը		Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Մայրենի/հայոց լեզու		0,2		0,4
Գրականություն				
Մաթեմատիկա	0,11	0,3		1,2
Օտար լեզու				
Ֆիզիկա		0,2		
Քիմիա				
Կենսաբանություն		0,4		

Աշխարհագրություն				
Հայոց պատմ.		0,2		

Սովորողների առաջադիմությունը՝ ըստ կրթական աստիճանների 2021-2022 և նախորդ ուստարիների կտրվածքով

Ցուցանիշ	2019-2020 ուստարի		2020-2021 ուստարի		2021-2022 ուստարի	
	1-4-րդ դաս.	5-9-րդ դաս.	1-4-րդ դաս.	5-9-րդ դաս.	1-4-րդ դաս.	5-9-րդ դաս.
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը	61 54%	37 66%	44 35%	53 27%	58 64%	53 27%
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը	32 28%	37 21%	28 22%	64 33%	22 24,4%	56 30%
Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը		20 71%		23 79%		26 72%
Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակել են ավագ դպրոցներում		5 18%		6 21%		8 22%
Սովորողների բացակայությունների թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների	2220	7329	2009	5665	1920	5352
Հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	2 1,1%	7 4,9%	5 2,6%	4 3,1%	15 7,7%	10 8%
Այլ երկրների ուս. հաստատություններ տեղափոխվածների թիվը և տոկոսը	0	3 3,2%	0	1 0,5%	5 4%	5 2,6

Մարզային, հանրապետական օլիմպիադաներում ու մարզական, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցությունը 2021-2022 ուստարում և նախորդ երկու ուստարիների ընթացքում

Ցուցանիշ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը		8 2,5%	9 3%
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը		2 0,6%	2 0,7%
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը			2 0,7%
Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը			2 0,7%
Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը	15 5%	27 8,4%	30 9,4%

Անհրաժեշտ է ապահովել՝ կրթության որակի շարունակական բարելավումը՝ հանրակրթության պետական նոր չափորոշիչի, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջներին համահունչ, այդ նպատակով՝ բարձրացնելով աշխատանքային կարգապահությունը, դասավանդման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը, դաստիարակչական և դաստեղակական, արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքների որակը, ներդպրոցական արդյունավետ վերահսկողությունը՝ դասալուսման, մշտապես իրականացվող վերլուծությունների (դպրոցի ներքին ու արտաքին գնահատման արդյունքներ , սովորողների ընթացիկ, ստուգողական, թեստային, նախագծային, քննական աշխատանքների արդյունքներ, սովորողների շարժի վերլուծության արդյունքներ, փոխտնօրենների, մեթոդմիավորումների նախագահների, դաստեղիկների աշխատանքների համեմատական վերլուծության արդյունքներ, դասալուսման արդյունքներ) միջոցով:

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի ֆինանսավորումը իրականացվել է հիմնականում պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի(տարրական և հիմնական) և պայմանավորված է սովորողների թվով:Այլ դրամական մուտքեր՝ նվիրատվության,դրամաշնորհի, վճարովի ծառայությունների մատուցման,վարձակալությունից՝ հոսքեր չեն եղել:

Դպրոցի կողմից ընթացիկ և նախորդող ֆինանսական տարիների ամենամյա ծախսերի նախահաշիվների և կատարված ծախսերի հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս,որ դպրոցի բյուջեն վերջին տարիներին հիմնականում տատանվում է 73-81 մլն դրամ գումարի սահմաններում՝ ձևավորվելով տարեսկզբի մնացորդի և ընթացիկ տարվա պետական բյուջեի մուտքերից : Գերակշիռ ծախսերը վերաբերում են աշխատավարձեր և դրան հավասարեցված վճարումներ,էներգետիկ,կոմունալ,կենցաղային,գրասենյակային, տեխսպասարկման և անվտանգության,կապի և ինտերնետի,համակարգչային ծառայությունների ապահովման, ջրամատակարարման և ջրահեռացման,աղբահանության և ախտահանության աշխատանքների ուղղություններին:

Ուսումնական նպատակներով,լաբորատոր նյութերի և սարքավորումների,գույքի ձեռքբերման նպատակով կատարվող ծախսերը կազմում են ընդհանուր բյուջեի շուրջ 0,5 տոկոսը,քանի որ աշակերտների թվով պայմանավորված ֆինանսավորման տատանումները ռիսկային գործոն են հանդիսացել նախահաշվի այլ ծախսեր հողվածում եղած գումարները հատկացնելու ուսումնական նպատակներով կատարվող ծախսերին.

01.01.2020 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը 4827.9 հազար դրամ, 2020 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 68772.82.9 հազար դրամ, ընդամենը՝ 2020 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ 73600.720.9 հազար դրամ:

Հ/Հ	2020 թվական	Հաստատված նախահաշվով նախատեսված գումարը /հազար դրամ/	Փաստացի կատարված ծախսեր /հազար դրամ/
	Տնտեսագիտական դասակարգման հոլվածների անվանումները		
1	2	3	4
1.	Աշխատողների աշխատավարձեր	68300.0	32462.5
2.	Տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճար	297.6	119.8
3.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	800.0	511.1
4.	Գազի ծախս	2300.0	1658.8
5.	Աղբահանության ծախս	75.6	18.9
6.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծախս	130.0	48.1
7.	Կապ և ինտերնետ	184.0	74.7

8.	Տեղեկատվական ծառայություններ	44.0	20.8
9.	Գազի տեխսպասարկում և անվտանգություն	55.0	32.9
10.	Հրդեհային անվտանգության ծառայություն	20.0	-
11.	Ախտահանման աշխատանքների ծախս	15.0	-
12.	Գրասենյակային նյութեր և հագուստ	160.0	
13.	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	250.0	
14.	Այլ նպաստներ բյուջեից/դասագրքերի վարձավճար/	-	-
15.	Համակարգչային ծառայություններ/ՀԾ/	95.0	95.0
16.	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	80.0	-
17.	Էլեկտրոնային ստորագրություն	6.0	6.0
18.	Պարտադիր վճարներ	15.0	-
19.	Այլ ծախսեր	773.720.9	-
	Ընդամենը	73600.720.9	35048.6

01.01.2021 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը 3289.9 հազար դրամ, 2021 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 75355.8 հազար դրամ, ընդամենը՝ 2021 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ 78594.7 հազար դրամ:

Հ/Հ	2021 թվական	Հաստատված նախահաշվով նախատեսված գումարը /հազար դրամ/	Փաստացի կատարված ծախսեր /հազար դրամ/
	Տնտեսագիտական դասակարգման հոլվածների անվանումները		
1	2	3	4
1.	Աշխատողների աշխատավարձեր	69834.7	69080.5
2.	Տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճար		
3.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	800.0	612.7
4.	Գազի ծախս	2700.0	2308.0
5.	Աղբահանության ծախս	75.6	75.6
6.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծախս	530.0	460.9
7.	Կապ և ինտերնետ	184.0	148.8
8.	Տեղեկատվական ծառայություններ	70.0	48.8
9.	Գազի տեխսպասարկում և անվտանգություն	55.0	54.8
10.	Հրդեհային անվտանգության ծառայություն	20.0	20.0
11.	Ախտահանման աշխատանքների ծախս	15.0	15.0
12.	Գրասենյակային նյութեր և հագուստ	170.0	169.1
13.	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1067.5	250.0
14.	Այլ նպաստներ բյուջեից/դասագրքերի վարձավճար/	-	-
15.	Համակարգչային ծառայություններ/ՀԾ/	95.0	95.0

16.	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	80.0	32.0
17.	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն	140.8	140.8
18.	Պարտադիր վճարներ	318.2	113.8
19.	Այլ ծախսեր	2402.9	-
20.	Կրակմարիչ	36.0	36.0
	Ընդամենը	78594.7	73661.8

01.01.2022 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը 4932.9 հազար դրամ, 2022 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 76067.7 հազար դրամ, ընդամենը՝ 2022 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ 81000.6 հազար դրամ:

Հ/Հ	2022 թվական	Հաստատված նախահաշվով նախատեսված գումարը /հազար դրամ/	Փաստացի կատարված ծախսեր /հազար դրամ/
	Տնտեսագիտական դասակարգման հոլվածների անվանումները		
1	2	3	4
1.	Աշխատողների աշխատավարձեր	69753.9	68647.7
2.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	800.0	724.7
3.	Գազի ծախս	2700.0	2435.4
4.	Աղբահանության ծախս	75.6	75.6
5.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծախս	420.0	269.0
6.	Ախտահանման աշխատանքների ծախս	15.0	15.0
7.	Կապ և ինտերնետ	184.0	148.2
8.	Ներքին գործողումներ	75.0	
9.	Համակարգչային ծառայություններ/ՀԾ/	95.0	95.0
10.	Այլ նպատակներ բյուջեից/աշխ. Մասնագիտական զարգ. ծառ./	288.0	288.0
11.	Տեղեկատվական ծառայություններ	55.8	33.8
12.	Մասնագիտական ծառայություններ	375.0	306.7
13.	Շենք և կառ. ընթ. նորոգում	250.0	
14.	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	80.0	80.0
15.	Գրասենյակային նյութեր և հագուստ	200.0	167.1
16.	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	3335.3	2809.7
17.	Հատուկ նպատակային այլ նյութեր	200.0	119.0
18.	Պարտադիր վճարներ	318.0	108.8
19.	Այլ ծախսեր	1780.0	
	Ընդամենը	81000.6	76323.7

01.01.2023 թ.-ի դրությամբ՝ տարեկզբի մնացորդը 4676.9 հազար դրամ, 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ կատարվել է 8 ամսվա համար՝ 52980.3 հազար դրամ, ընդամենը՝ 2023 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ 57.657.2 հազար դրամ, որը նախատեսված է 2023 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2023 թ.-ի օգոստոսի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար, պայմանավորված՝ 2023 թ.-ի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտնող ֆինանսավորման նոր բանաձևով:

ՀՀ Կառավարության 22.09.2022 թ. թիվ 1481-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգ»-ով և ՀՀ ԿԳՄՄ նախարարի 07.12.2022 թ. «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները ու նորմատիվները հաստատելու մասին» N 79-Ն հրամանի հավելվածով սահմանվել են ֆինանսավորման նոր գործակիցներ ու նորմատիվներ, որը հնարավորություն է տալու դպրոցին՝ ըստ դասարանների թվի պետական բյուջեից ստանալու ֆինանսավորում՝ հաշվի առնելով դասարանների թվաքանակը, ընդհանուր ղեկավարման և մանկավարժական աշխատանքների, հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական, գործավարության, սպասարկման համար նախատեսվող հաստիքները, հաշվի են առնված էներգետիկ և կոմունալ ծախսերը, կապի ծառայությունների, գրասենյակային, տնտեսական ապրանքների և նյութերի համար նախատեսված ծախսերը:

Շատ կարևոր է, որ ֆինանսավորման նոր բանաձևով, այլևս, դպրոցը կարող է գործող լաբորատորիաներից օգտվող դասարանների թվով՝ ըստ դասարանների տարեկան միջին թվի ձեռք բերել լաբորատոր ապրանքներ և նյութեր (նախատեսված է նյութաձախսի տարեկան գումարը): Նախատեսված են ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար ծախսեր:

Այս հանգամանքը հնարավորություն կտա լուծելու դպրոցի ուսումնական նյութական բազայի համալրման խնդիրը:

Դպրոցի բյուջետային միջոցների ծախսերը՝ տոկոսային արտահայտությամբ.

	2020	2021	2022
Նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը	0	0	0
Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	0	0	0
Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը	0	0	0
Աշխատավարձերի վճարման գծով տարեկան ծախսերի չափը	89.4%	93.2%	92.5%
Կոմունալ վճարների գծով տարեկան ծախսերի չափը	10.6%	6.8%	7.5%
Նոր գույքի, սարքավորումների ձեռք բերման գծով տարեկան ծախսերի չափը	Տատանվում է 0.13-ից – 0.2%-ի սահմաններում		

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը ակտիվացնելու, դպրոցի կարիքները հոգալու և լրացուցիչ ֆինանսական հոսքեր ապահովելու նպատակով կարևոր ենք համարում՝

- Իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություն,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով դպրոցի չօգտագործվող շինությունները տալ վարձակալության,
- Մրցութային հիմունքներով լրացուցիչ ֆինանսավորում պետական բյուջեից,
- Օրենքով չարգելված ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների նվիրատվություններ,
- Բարեգործական աջակցություն:

ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայումս տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները(ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, դասավանդման նոր եղանակները, ձևերն ու մեթոդները) դարձել են աշխատանքի կազմակերպման, արդիական կրթության հրամայական և ուսուցման նոր գործիք: Երեխաները շատ վաղ, դեռևս նախադպրոցական տարիքից են ընկղմվում ՏՀՏ աշխարհը՝ հեռախոս, պլանշետ, համակարգիչ, համացանց... Այս ամենը դառնում է նրանց առօրյայի անբաժան մասը, գերող իրականությունը, հետաքրքրություններից ամենահետաքրքիրը: Դպրոցն իր ավանդական միջավայրով, տպագիր գրքերը, տետրերը, թուղթն ու գրիչը արդեն չեն համապատասխանում երեխաների իրական հետաքրքրություններին ու ձգտումներին:

ՏՀՏ-ները և կրթական նոր տեխնոլոգիաները գործունակ միջոց են ,որոնք օգնում են աշակերտներին խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման, ստանալ ավելի բազմազան և շատ դեպքերում անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան տեղեկատվություն, թույլ են տալիս կիրառել ժամանակակից գնահատման, ինքնագնահատման և ուսուցման մեթոդներ: ՏՀՏ-ների միջոցով հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ նյութեր ու տեղեկություններ և ամենակարևորը՝ զիտելիքի ստացման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները(թվայնացված դասագրքեր) , փոփոխել հին մոտեցումներն ու ուսուցման մեթոդները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:

Դպրոցում կրթական ծրագրերի իրականացման, վարչատնտեսական, հաշվապահական հաշվառման, գրադարանային գործի, աշակերտների առաջադիմության և հաճախման,

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործում շատ մեծ է S2S և այլ կրթական տեխնոլոգիաների կիրառումը:

<<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ>>-ում (emis.am) էլեկտրոնային մատյանի և էլեկտրոնային օրագրի կիրառումը հնարավորություն է տալիս տնօրինությանը մշտապես վերահսկել սովորողների առաջադիմությունը, ուսման որակը, բացակայությունների հաշվառումը և, որ կարևորն է, համակարգը միաժամանակ ծնողներին հասանելի է դարձնում իրենց երեխաների առաջադիմությունը:

Համակարգը ամբողջական տեղեկատվություն է պարունակում դպրոցի շենքային պայմանների, ենթակառուցվածքների, աշխատակազմի և սովորողների մասին: Համակարգը հնարավորություն է տալիս իրականացնել ուսուցիչների հերթական պարտադիր և կամավորատեստավորման գործընթացները, որն էականորեն դյուրացրել է այդ գործընթացները: Համակարգի միջոցով իրականացվում է աշխատակիցների վերաբերյալ տվյալների, հաստիքների և տարիֆիկացիայի ձևավորման, սովորողների ընդունման, տեղափոխման, ազատման գործընթացները:

ԴԿՏՀ համակարգը հնարավորություն է տալիս ճիշտ պլանավորել դասագրքերի պատվիրման, ստացման, բաշխման, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին պետական բյուջեի միջոցներից գումարների զեղչումը:

Դպրոցի փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է Mulberry ,Schools Webmail համակարգերի միջոցով՝ ինայելով ժամանակը և միջոցները:

Հաշվապահական հաշվառման գործընթացները իրականացվում են ՀԾ, Client Treasury գանձապետական ծրագրերի միջոցով:

Այս տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս համապատասխան լիազորմարմիններին վերահսկելու դպրոցում իրականացվող կրթական, կառավարման և վարչատնտեսական գործընթացները, ուղղելու բացթողումները:

Դպրոցը օգտվում է ինտերնետային կրթական մի շարք կայքերից և հարթակներից (Teams, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram.blogspot.com, imdproc.am, Քան Ակադեմիա, շախմատի ակադեմիա, ապահով համացանց, դպրոցական դասագրքերի գրադարան, abcfinance.am, Mathemethics, ICT Training հարթակ, և այլն): Այդ կրթական էլեկտրոնային ռեսուրսներն արդյունավետ ուսումնաօժանդակ գործիքներ են, որոնք նպաստում են մանկավարժական աշխատանքի որակի բարձրացմանը, մանկավարժական աշխատողների մասնագիտական գիտելիքների ու S2S հմտությունների զարգացմանը և բարձրացնում են աշակերտների առաջադիմությունը, հետաքրքրությունն ու մոտիվացիան, դրանք նպաստում են նաև աշակերտներին ուսումնական գործընթացում ակտիվորեն ընդգրկվելուն, քանի որ թույլ են տալիս ուսուցչին և աշակերտին հաղորդակցվել միմյանց միջավայրում, նույն <<լեզվով>>:

● Դասավանդման գործընթացում կարևորելու ենք ուսուցման ժամանակակից մեթոդների՝ նախագծային աշխատանքների, ինտեգրված համակարգչային դասերի, լաբորատոր և

գործնական, խմբային, համագործակցային աշխատանքների իրականացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

- Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգացնել աշակերտների մտածողությունն ու գրելու հմտությունները,
- Տեխնոլոգիաների կիրառմամբ անհատականացնել ուսուցումը,
- Ջարգացնել աշակերտների գեղարվեստական արտահայտչականությունը (տեսաժապավենների ստեղծումը, թվային լուսանկարչությունը և այլն նպաստում են երեխաների գործունեության գեղարվեստական արտահայտչականության բարձրացմանը),
- Տեխնոլոգիաների կիրառմամբ նպաստել կառավարման, վարչատնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները հնարավորություն են տալիս ուսուցչին խնայել ժամանակը և ջանքերը ներդնել այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն ուսումնական միջավայրի մշտական գնահատում ու բարելավում: Այսպիսով՝ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում պետք է օժանդակի ուսուցմանը, հետազոտական աշխատանքին, դասերի կազմակերպմանն ու կառավարմանը, աշխատակազմի մասնագիտական զարգացմանը, պետք է ապահովի ուսումնառության համար արդյունավետ միջավայր, փոխներգործման և հաղորդակցման գործնական կիրառում իրական կյանքում, դպրոցի կառավարման բարելավում, տեղեկատվության հայթայթման և վերլուծության ժամանակակից միջոցներ, հետադարձ կապ:

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Իրավիճակի վերլուծությունը հանգում է այն եզրակացության, որ դպրոցի ֆիզիկական պայմանները, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ պայմանները, ենթակառուցվածքների առկայությունը և որակը, դպրոցի ներքին հարդարանքը, ուսումնական յուրօրինակ բազան, անուղղակի ազդեցություն ունեն մի կողմից՝ աշակերտների առաջադիմության, մյուս կողմից՝ ուսուցիչների, աշխատակազմի, աշխատանքի արդյունավետության վրա: Ֆիզիկական պայմանների ազդեցությունը աշակերտների առաջադիմության և ուսուցիչների վրա միջնորդավորված է դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտով: Այլ կերպ ասած, ֆիզիկական պայմանները ազդում են բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, իսկ վերջինս էլ իր հերթին՝ աշակերտների առաջադիմության վրա:

Ըստ այդմ էլ դպրոցում առկա հիմնախնդիրները պետք է դասակարգել՝ ըստ առաջնայնության, քանի որ դրանց առկայությունը փոխկապակցված է, մի խնդրի լուծմամբ է պայմանավորված մյուս խնդրի կամ խնդիրների լուծումը:

Գլխավոր հիմնախնդիրներն են՝

1. Դպրոցի շենքն ունի հիմնանորոգման կարիք (տանիքի ազդեցիկների փոխարինում թիթեղով, հին պատուհանների և դռների փոխարինում, ներքին հարդարում, ներառական միջավայրի ստեղծում),

2. Լոկալ ջեռուցման անվտանգ համակարգի կառուցում,

3. Ուսումնանյութական բազայի համալրում (S2S սարքավորումներ, ուսումնական լաբորատոր սարքավորումներ և նյութեր և այլն):

Կարծում ենք, որ գլխավոր հիմնախնդիրների լուծումը հնարավոր կդարձնի մի շարք այլ այնպիսի խնդիրների լուծումը, ինչպիսիք են սովորողների արտահոսքն այլ դպրոցներ, կբարձրացնի առաջադիմության և ուսման որակը՝ ստեղծելով մոտիվացիա, աշխատանքի արդյունավետություն:

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը նպատակաուղղված է հաստատության հետագա արդյունավետ գործունեության և աստիճանական զարգացման ապահովմանը, նպատակային խնդիրների լուծմանը, այդ գործում ներգրավելով՝ կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին, շահագրգիռ կողմերին՝ բարձրացնելով կրթադաստիարակչական աշխատանքների որակը, ապահովելով՝ բաց մասնակցային կառավարումը, բարձրացնելով՝ դպրոցի նկատմամբ վստահությունը:

Վերլուծությունների և առկա խնդիրների հիման վրա սահմանել ենք դպրոցի զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները (հաշվի առնելով՝ դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները):

- **Հաստատության շենքային պայմանների բարելավում (ներառական ուսումնական միջավայրի ստեղծում),**

- **Նյութատեխնիկական բազայի համալրում՝ սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռք բերման, արժեքային համակարգի ձևավորման, առարկայական ծրագրերի յուրացման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովում,**

- **Ուսման որակի բարձրացում, ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում, ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում,**

- **Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի և ներքին փաստաթղթերի համապատասխանեցում հանրակրթության ոլորտում, աշխատանքային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններին (այդ փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ստեղծում),**

- Վերապատրաստումների,ատեստավորումների(այդ թվում՝ կամավոր,տարակարգեր) խրախուսման միջոցով մանկավարժական համակազմի մասնագիտական,մեթոդամանկավարժական որակների և կարողությունների բարձրացում,
- Դպրոցի կառավարմանը մասնակցային ապահովում՝ ներգրավելով խորհրդակցական մարմիններին,դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում,
- Դպրոց-ընտանիք-համայնք կապերի ամրապնդում՝ դպրոցի զարգացման գործում համայնքի և ծնողների ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում,
- Համագործակցություն դպրոցների խնդիրներով մտահոգ կազմակերպությունների, անհատների հետ,
- Ներքին կարգապահական կանոնների,սահմանված վարքագծի կանոնների պահանջների կատարում,
- Դպրոցում սովորողների և աշխատակազմի համար՝ ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում,առողջության պահպանման և ամրապնդման համապատասխան միջոցառումների իրականացում և անվտանգ կենսագործունեության ապահովում (նպատակային ուսուցողական ծրագրերի իրականացում,որոնք ուղղված են անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը),
- Դպրոցի ֆինանսական միջոցների նպատակային օգտագործում, ֆինանսական ծախսերի հիմնավորվածության և թափանցիկության ապահովում,

Սահմանված նպատակները, խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան գործողությունները , ակնկալվող արդյունքները, պատասխանատուները (կատարողները), ժամկետները և իրականացման համար անհրաժեշտ միջոցները

1.	
Ոլորտը՝	Դպրոցի ֆիզիկական և կրթական միջավայր
Նպատակը՝	Հաստատության շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում:

Խնդիրը՝ Արդի դպրոցի ու կրթական համակարգի պահանջներին բավարարող ներառական ուսումնական միջավայրի ստեղծում, նյութատեխնիկական բազան նոր ժամանակակից տեխնիկայով համալրելու միջոցով՝ սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռք բերման, արժեքային համակարգի ձևավորման, առարկայական ծրագրերի յուրացման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովում: Դասասենյակները հարմարեցնել դպրոցի կրթական պահանջներին:

Մահմանված նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան գործողություններ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատուներ	Ժամկետներ	Միջոցներ
1	2	3	4	5
<p>Շենք-շինությունների վերանորոգում</p> <p>1. Ցուցաբերել հետևողականություն, դպրոցի հիմնանորոգման հարցը բարձրացնել համապատասխան լիազոր մարմիններում (մարզպետ, ԿԳՄՍ նախարար, քաղաքապետ), որպեսզի դպրոցը ընդգրկվի պետական ծրագրով վերանորոգվող դպրոցների շարքում:</p>	<p>Այսօր դպրոցաշինության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունքում դպրոցները գտնվում են ուշադրության կենտրոնում, ինչպես նաև գտնվում են մարզային իշխանությունների ուշադրության կենտրոնում, ակնկալվում է դպրոցի ընդգրկում դպրոցաշինության պետական ծրագրերում:</p>	<p>Տնօրեն, վարչ. համակարգող</p>	<p>2023-2028</p>	<p>Պետ. բյուջե, հովանավորների ներգրավում</p>
<p>2. Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացում (դասասենյակներ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, դպրոցի պայմանները համապատասխանեցնել ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին) այդ գործում կամավորության սկզբունքով ներգրավել դպրոցի աշխատակիցներին, ծնողներին՝</p>	<p>Բարենպաստ ուսումնական միջավայրի ստեղծում:</p>	<p>Տնօրեն, վարչ. համակարգող</p>	<p>2023-2028</p>	<p>Պետ. բյուջե, հովանավորների ներգրավում, անվճար հիմուն</p>

անվճար հիմունքներով մասնակցելու վերանորոգման աշխատանքներին :				քննարկ կամավորների աշխատանք
3. Լոկալ ջեռուցման անվտանգ համակարգի կառուցում: Խնդիրը ներկայացնել լիազոր մարմիններին , գտնել բարերարների:	Համապատասխան օդային և ջերմային պայմանների ապահովում:	Տնօրեն, վարչ. համակարգող	2023-2028	Պետ. բյուջե, հովանավորների ներգրավում
4. Հին պատուհանների ու դրսի դռների փոխարինում նորով, փոխարինումը իրականացնել՝ ըստ առաջնահերթության՝ դասասենյակներ, առարկայական կաբինետներ, գրադարան: Խնդիրը ներկայացնել լիազոր մարմին, գտնել բարերարների	Էներգաարդյունավետության և էներգախնայողության բարելավում:	Տնօրեն, վարչ. Համակարգող	2023-2028	Պետ. Բյուջե, դպրոցի բյուջե, հովանավորների ներգրավում
5. Դպրոցի տանիքի մասնակի վերանորոգում: 5.1. Հնարավորության դեպքում ազդեցիկերը փոխարինել թիթեղով (ունենալ նախագծա-նախահաշվարկային փաստաթղթեր), Խնդիրը ներկայացնել լիազոր մարմին, գտնել բարերարների:	Շենքը կաշտպանվի ֆիզիկական քայքայումից, խոնավությունից, ուժեղ քամիների դեպքում վնասներից:	Տնօրեն, վարչ. Համակարգող	2023-2028	Պետ. Բյուջե, դպրոցի բյուջե, հովանավորների ներգրավում
6. Շենքի և տարածքի անվտանգ շահագործում, անձնակազմի անվտանգության ապահովում Կապի և արտակարգ իրավիճակներում ազդարարման համակարգի հակահրդեհային անվտանգության լրակազմի ապահովում, տանիքի պատում հրակայուն նյութերով: Տարհանման պլանի վերանայում՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները , թարմացնել տարհանման սխեմաները՝ գունային սլաքներով, տարհանման ուղիներն ազատել ավելորդ իրերից, իրականացնել տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ	Ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար կապահովվի անհրաժեշտ անվտանգություն:	Տնօրեն, վարչ. համակարգող,	2023-2028	Դպրոցի բյուջե

<p>միջոցառումներ , պարբերաբար գործարկել քաղաքացիական պլանը,իրականացնել վարժանքներ սովորողների և անձնակազմի շրջանում,համագործակցել տարածքը սպասարկող ԱԲ փրկարար ծառայության հետ՝ համատեղ վարժանքներ իրականացնելու համար: Բարելավվել ապաստարանի պայմանները, ապահովել լուսավորությամբ, օդափոխությամբ, անհրաժեշտ այլ սանիտարահիգիենիկ պայմաններով</p>				
<p>7. Սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման միջոցառումներ: Միջավայրը համապատասխանեցնել առողջապայության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին: Սանհանգույցներն ապահովել շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով: Ճաշարանը համապատասխանեցնել սանիտարահիգիենիկ պայմաններին, փակցնել առողջ սննդակարգի վերաբերյալ պաստառներ: Սահմանված կարգով իրականացնել օդափոխությունը, տարածքների աղբահանումը,ախտահանումը , խոնավ մաքրումը: Տարածքում պարբերաբար իրականացնել դեռատիզացիոն աշխատանքներ:</p>	<p>Մշտապես մաքուր և բարեկարգ պահել ուսումնական միջավայրը, խուսափել հիվանդությունների տարածումից:</p>	<p>Տնօրեն, վարչ. Համակարգող, տնտեսվար, բուժքույր, մաքրուհիներ</p>	<p>Մշտապես</p>	<p>Դպրոցի բյուջե</p>
<p>8. Առողջության պահպանման միջոցառումներ: Բուժկետում ապահովել առաջին բուժօգնության միջոցների և դեղորայքի առկայությունը՝ կազմակերպելու սովորողներին և աշխատակիցներին առաջին բուժօգնության տրամադրումը: Դպրոցում իրականացնել առողջության պահպանմանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ՝ ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների օգտագործման դեպքերը կանխարգելելու ,մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման,հոգեբանական ճնշման</p>	<p>Սովորողների և աշխատակազմի առողջության պահպանում</p>	<p>Տնօրեն, վարչ. համակարգող, բուժքույր, ֆիզկուլտուրայի և ՆԶՊ ուսուցիչներ</p>	<p>Մշտապես</p>	<p>Դպրոցի բյուջե</p>

<p>բացառման կամ բացահայտման աշխատանքներ, բացառել անորակ սննդի ստացումը ,օրենքով սահմանված կարգով իրականացնել սովորողների և աշխատակազմի պարբերական բժշկական ստուգումները, համագործակցել Սևանի ԲԿ ՓԲԸ-ի հետ: Մշտապես հետևել ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի,ՆԶՊ և անվտանգ կենսագործունեության առարկաների դասաժամերի արդյունավետ անցկացմանը</p>				
<p>9. Դպրոցի բակի,մարզահրապարակի բարեկարգում,կանաչապատում, ծառատունկ: Իրականացնել անձնակազմի ուժերով, համագործակցել համայնքի, համայնքապետարանի, տնկարանների հետ:</p>	<p>Բարեկարգ, կանաչապատ տարածք, առողջ և տրամադրող ֆիզիկական միջավայրի ստեղծում, հանգստի և ժամանցի պայմանների ստեղծում:</p>	<p>Տնօրեն, վարչ. համակարգող, տնտեսվար,</p>	<p>2023-2025</p>	<p>Դպրոցի բյուջե, նվիրատվություններ</p>
<p>10. Ուսումնականության բազայի համալրում: Բնագիտական առարկաների կաբինետների և լաբորատորիաների կահավորում, համապատասխան ուսումնական նյութերով և սարքավորումներով: Նոր համակարգչային սարքավորումների, էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերում: Ցանկալի է Արմաթ լաբորատորիայի հիմնում: Գրադարանի համալրում նոր ուսումնական և գեղարվեստական գրականությամբ(այդ թվում թվայնացված): Ըստ ուսումնական առարկաների՝ համապատասխան պաստառների, պլակատների, քարտեզների, գլոբուսների ձեռքբերում: Խնդիրը ներկայացնել լիազոր մարմնին, գտնել բարերարների և հովանավորների:</p>	<p>Ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսումնառության որակի, սովորողների և աշխատակազմի ՏՀՏ գիտելիքների և հմտությունների զարգացում:</p>	<p>Տնօրեն, վարչ. համակարգող,</p>	<p>2023-2028</p>	<p>Դպրոցի բյուջե, բարերարներ</p>

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը.

- Աշակերտների թվով պայմանավորված դասարանների թվի նվազումը, որը կարող է տանել պետական բյուջեից ֆինանսավորման կրճատման,
- Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը,
- Բարերարներ չգտնելը,
- Ֆորս-մաժորային իրավիճակները:

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.

- Մշտապես հետևողական աշխատանք տանել արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար, հրատապ խնդիրների լուծումը պատկան մարմիններում միշտ պահել օրակարգում,
- Դպրոցի գործունեության, ծախսերի թափանցիկության ապահովում, դպրոցի նկատմամբ վստահության ապահովում:

2

Ոլորտը՝ Աշակերտական համակազմ

Նպատակը՝ Կրթության պայմանների և որակի շարունակական բարելավում, կարողունակ (կոմպետենտ) քաղաքացիների ձևավորում, ուսումնադաստիարակաչական համակարգի կատարելագործում, աշակերտների մրցունակության բարձրացում, համակողմանի զարգացում, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակում և մասնագիտական կողմնորոշման ապահովում

Խնդիրը՝ Սովորողների մոտիվացիայի խթանում, ուսման որակի բարձրացում, աշակերտական ինքնավարության ապահովում, արժեհամակարգի ձևավորում

Սահմանված նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան գործողություններ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատուներ	Ժամկետներ	Միջոցներ
1	2	3	4	5
<p>1. Հետաքրքիր կրթական առօրյայի ստեղծում Միջոցառումների, խաղ-վիկտորինաների, մրցույթների, ուսումնական բանավեճերի, էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և պատկերասրահներ, թատրոններ, նշանավոր անձանց հետ հանդիպումների կազմակերպում, ֆիլմերի դիտում և այլն:</p>	<p>Աշակերտը պետք է կարևորի իր առօրյան արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը</p>	<p>Տնօրինություն, մանկավարժական և ծնողական խորհուրդներ, աշակերտական խորհուրդ</p>	<p>2023-2028</p>	
<p>2. Մշտադիտարկումների միջոցով սովորողների կրթական կարիքների բացահայտում, գնահատում և ըստ այդմ սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում, տարբերակված ուսուցում</p>	<p>Աշակերտների անհատականության դրսևորում</p>	<p>Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական և կրթական աջակցությունների գծով տեղակալներ, դասղեկներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ</p>	<p>2023-2028 Մշտապես</p>	
<p>3. Առարկայական դասավանդման պայմանների բարելավում</p>	<p>Ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձրացում, որակի բարելավում:</p>	<p>Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական և կրթական աջակցությունների գծով տեղակալներ, դասղեկներ, ուսուցիչներ</p>	<p>2023-2028 Մշտապես</p>	

		եր, ուսուցչի օգնականն ներ		
4. Առարկայական դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառում	Գիտելիքների յուրացում , ուսումնասրության որակի բարելավում	Տնօրեն, տնօրենի ուսումնա կան աշխատա նքների գծով տեղակալ, ուսուցիչն եր, մեթոդաբա վորման նախագահ ներ	2023-2028 Մշտապես	
5. Աշակերտների համար առկա և առցանց լրացուցիչ կրթական ռեսուրսների և հնարավորությունների ապահովում	Աշակերտների գիտատեխնիկական կարողունակությունների ձևավորում	Ուսուցիչն եր, ինֆորմա տիկայի ուսուցիչ	2023-2028 Սկզբում առկա ռեսուրսների հաշվին, այնուհետև ընդլայնել նյութատեխնի կական բազայի համալրումով	
6. Աշակերտների համար ստեղծել տվյալ առարկայի լավագույն մասնագետների հետ շփվելու հնարավորություն	Շփման, ինքնադրստրվելու կարողությունների ձևավորում	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	2023-2028 Հաճախակի	
7. Աջակցել աշակերտներին առարկայական օլիմպիադաներին ավելի պատրաստված մասնակցելու գործում	Բարձրացնել օլիմպիադաներին աշակերտների մասնակցության աստիճանը և մրցանակներ ստանալու հավանականությունը	Տնօրենի ուսումնա կան գծով տեղակալ, առարկայ ական ուսուցիչն եր, մեթոդաբա վորումներ	2023-2028 Մշտապես	
8. Աջակցել աշակերտներին տարբեր մրցույթներին ավելի պատրաստված մասնակցելու գործում	Բարձրացնել տարբեր մրցույթներին աշակերտների մասնակցության աստիճանը և հաղթանակներ	Տնօրենի ՄԿԱ տեղակալ, առարկայ ական	2023-2028 Մշտապես	

	գրանցելու ցանկությունը	ուսուցիչներ		
9. Աջակցել աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում	Օգնել աշակերտներին կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում	Տնօրենի ՄԿԱ տեղակալ, առարկայական ուսուցիչներ	2023-2028 Մշտապես	
10. Աշակերտների համար ստեղծել հնարավորություն՝ շփվելու մշակութային, հասարակական-քաղաքական գործիչների հետ	Ճանաչողության և հետաքրքրությունների զարգացում	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,	2023-2028 Հաճախակի	
11. Զարգացնել աշակերտների քննադատական մտածողությունը, մեղիագրագիտությունը, հանրային ելույթին և բանավիճելու կարողությունները	Զարգացնել աշակերտների թվային և մեղիա կարողունակությունները	Տնօրեն, Տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ուսուցիչներ		

12. Նախաձեռնել միջոցառումներ և ծրագրեր՝ ուղղված աշակերտների՝ պետականության դերի գիտակցմանը, ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացմանը, հայրենասիրական, մարդասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցմանը և դաստիարակությանը	Զարգացնել աշակերտների ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունները	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ, ուսուցիչներ, դասղեկներ	2023-2028 Հաճախակի	
13. Նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, ստեղծագործական կարողությունների դրսևորմանը և զարգացմանը	Զարգացնել աշակերտների մշակութային կարողունակությունները և արժեքային համակարգի ձևավորում	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ, ուսուցիչներ, դասղեկներ	2023-2028 Հաճախակի	
14. Կիրառել դուալ, հեռավար և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները	Աշակերտների աշխարհայացքի ընդլայնում, մեղիա կարողունակությունների զարգացում	Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ,	2023-2028 Հաճախակի	

		ուսուցիչներ		
15. Համագործակցել տարածքում գործող դպրոցների, ՏԻՄ-ի, հիմնարկ-ձեռնարկությունների, մշակութային օջախների, ՀԿ-ների հետ, աշակերտների համար կազմակերպել ճանաչողական այցեր տվյալ կառույցներ	Աշակերտների ինքնաձանաչողական և սոցիալական կարողունակությունների և արժեքային համակարգի ձևավորում	Տնօրեն	2023-2028 Հաճախակի	
16. Աշակերտների մոտ խթանել կամավորականության մշակույթը	Աշակերտների սոցիալական կարողունակությունների, արժեքային համակարգի ձևավորում	Տնօրեն, ԴԱԿ, դասադասուցի	2023-2028 Մշտապես	
17. Նպաստել աշակերտների կարողությունների զարգացմանը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտում	Աշակերտների թվային և մեդիա կարողունակությունների ձևավորում	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2028 Մշտապես	
18. Նպաստել աշակերտների մոտ առողջ ապրելակերպի ամրապնդմանը	Առողջության պահպանում	Տնօրեն, ուսուցիչներ, դասադասուցի, բուժքույր	2023-2028 Մշտապես	
19. Կազմակերպել տարաբնույթ մարզական միջոցառումներ, առաջնություններ, մրցույթներ և թեմատիկ վիկտորինաներ	Աշակերտների ինքնադրսևորման կարողությունների զարգացում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ուսուցիչներ	2023-2028 Հաճախակի	
20. Համագործակցել այլ կազմակերպությունների հետ՝ ուսումնասիրտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպման համար	Առողջության պահպանում և ամրապնդում, հանգստի և ժամանցի կազմակերպում	Տնօրեն	2023-2028 Հաճախակի	

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը.

- Ֆորս-մաժորային իրավիճակներ,
- Մասնակցության պասիվություն,
- Դեռահասության շրջանի խնդիրների առկայություն,
- Մասնագիտական կողմնորոշման դժվարություններ:

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.

- Դպրոց-ծնող-համայնք կապերի մշտական ապահովում,
- Սովորողների հետ կրթական աջակցությունների կազմակերպում:

3

Ոլորտը` Համակազմ (ղեկավար և մանկավարժական կազմ)

Նպատակը` Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում
Խնդիրը` Համակազմի մասնագիտական կատարելագործում

1.Ուսուցիչների հեղինակության և դերի բարձրացում(կամավորատեստավորում, տարակարգի ձեռքբերում, բարելավք և աշակերտակենտրոն մոտեցումներ)	Դպրոցի վարկանիշի և հեղինակության բարձրացում	Տնօրեն, ուսուցիչներ,	2023-2028	
2.Որակյալ մասնագետների ներգրավում, ուսուցչի թափուր աշխատատեղերի համայրում	Ուսումնառության որակի բարելավում	Տնօրեն	2023-2028	
3.Ուսուցիչների(ուսուցչի օգնականների) կարողությունների զարգացում և ընթացիկ մասնագիտական աջակցության կազմակերպում	Դասավանդման արդյունավետության բարձրացում, ուսման որակի բարելավում	Տնօրեն	2023-2028	
4.Ուսուցիչների և մյուս աշխատակիցների համար համակարգչային նվազագույն գիտելիքների ուսուցում(Word, Excel, PPT, հեռավար ուսուցման ծրագրեր, որոնման համակարգեր և այլն)	Համակարգչային գրագիտության և S2S կիրառման կարողությունների բարձրացում	Տնօրեն	2023-2028	
5.Աջակցություն երթևեկող ուսուցիչներին և դպրոցի մյուս աշխատակիցներին(ովքեր չեն օգտվում երթևեկող մանկավարժների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման	Աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացում	Տնօրեն	2023-2028	

պետական ծրագրից)աշխատանքներ տանել ՏԻՄ-ի հետ,աջակցություն փնտրել բարերարների շրջանում				
6.Ուսուցիչների արդյունավետության գնահատում և լավագույն ուսուցիչների խրախուսում(բազմաբնույթ ուսումնասիրություններ, շնորհակալագրեր, պատվոգրեր և այլն)	Աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացում	Տնօրեն	2023-2028	
7.Տնօրենի դպրոցի կառավարման կարողությունների զարգացում, փորձի փոխանակում	Կառավարման արդյունավետության բարձրացում	Տնօրեն	2023-2028	
8.Տնօրենի՝ ուսումնական և ՄԿԱ գծով տեղակալների կարողությունների զարգացում, փորձի փոխանակում	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում	Տնօրեն	2023-2028	
9.Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչների կարողությունների զարգացում, փորձի փոխանակում	Դաստիարակչական աշխատանքների բարելավում	Տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տեղակալ և	2023-2028	
10. Զինղեկի,քաղ պաշտպանության շտաբի պետի կարողությունների զարգացում,փորձի փոխանակում(վերապատրաստումներ,համագործակցություն ԱԻ ծառայության և ուսումնական հաստատությունների հետ)	Սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների զարգացում	Տնօրեն, զինղեկ	2023-2028	
11. Այլ աշխատակիցների(օպերատոր, լաբորանտ, գրադարանավար և այլն) կարողությունների զարգացում	Աշխատանքի արդյունավետության բարձրացում	Տնօրեն	2023-2028	

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը.

- Պասիվություն

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.

4

Ոլորտը՝

Դպրոցի գործունեություն

Նպատակը՝ Դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացում

Խնդիրը՝ Մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների, առարկայական մեթոդական միավորումների, արհմիութենական կոմիտեի գործունեության արդյունավետության բարձրացում, հոգաբարձուների խորհրդի ձևավորում, դպրոց-ընտանիք-համայնք համագործակցության ապահովում, դպրոցի գործունեության հրապարակայնություն և թափանցիկության ապահովում, սովորողների և աշխատակիցների հետ տարվող աշխատանքներ

1. Մանկավարժական խորհուրդի գործունեության արդյունավետության բարձրացում	Ուսումնադաստիարակչական աշխատանքների, առաջադիմության բարելավում	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ	2023-2028	
2. Առարկայական մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության բարձրացում (համագործակցել այլ դպրոցների հետ միջդպրոցական մեթոդմիավորումներ ստեղծելու համար)	Առարկաների դասավանդման որակի բարելավում, ուսուցման նոր եղանակների, ձևերի, մեթոդների, ՏՀՏ-ների կիրառում	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ	2023-2024	
3. Ծնողական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում	Դպրոց-ծնող կապի բարելավում, ծնողների ակտիվ մասնակցություն դպրոցական կյանքին	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ԴԱԿ, ԾԽ նախագահ	2023-2028 Մշտապես	
4. Աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում	Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհրդի գործունեություն	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ, ԱԽ նախագահ	2023-2028 Մշտապես	
5. Հոգաբարձուների խորհրդի ձևավորում	Աջակցություն դպրոցին	Տնօրեն, խորհրդի նախագահ	2023-2028	

6. Դասալսումների արդյունավետության բարձրացում	Դասավանդման որակի բարելավում	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մեթոդափափորումների նախագահներ, փոխադարձ դասալսումներ	2023-2028 Մշտապես	
7. Նպաստել արհմիութենական կոմիտեի գործունեության արդյունավետության բարձրացմանը, գումարների շարժի թափանցիկության ապահովմանը	Աշխատողների իրավունքների և շահերի պաշտպանություն, վստահության մթնոլորտի ստեղծում	Տնօրեն, արհկոմի նախագահ	2023-2028 Մշտապես	
8. Համայնք-դպրոց-ընտանիք սերտ կապի ու համագործակցության ապահովում	Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում, դպրոցի վարկանիշի բարձրացում, աջակցություն դպրոցին	Տնօրեն, դասղեկներ	2023-2028 Մշտապես	
9. Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և ներգրավում կրթական գործընթացում	Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների ընդգրկում դպրոց	Տնօրեն, ՏԻՄ	2023-2028 Մշտապես	
10. Աջակցություն դպրոցի դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակությանը, սոցիալական աջակցությանը, կազմակերպմանը	Ինտեգրում աշակերտական կոլեկտիվին	Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, հոգեբան	2023-2028 Մշտապես	
11. Դպրոցի հաստիքացուցակի, նախահաշվի և տարիֆիկացիայի հրապարակման և թափանցիկության ապահովում	Դպրոցի գործունեության թափանցիկության և վստահության ապահովում	Տնօրեն, վարչական համակարգող, հաշվապահ, օպերատոր	2023-2028	
12. Դպրոցում տրվող սննդի որակի, մատուցման կազմակերպման պայմանների բարելավում	Առողջ սննդակարգի ապահովում	Տնօրեն, վարչական համակարգող, խոհարար, բուժքույր	2023-2028 Մշտապես	
13. Աշակերտներին տրվող սննդացանկի և ճաշատեսակների	Դպրոցական սնունդ ծրագրի իրականացման նկատմամբ	Տնօրեն, վարչական համակարգող	2023-2028	

բաղադրության հրապարակում, մատակարարված կամ գնված սննդամթերքի քանակների և գների թափանցիկության ապահովում	վստահության հիմքերի ստեղծում		Մշտապես	
14. Ձեռնարկատիրական գործունեության ծավալում (դպրոցի պտղատու այգու վերականգնում և արտադրանքի իրացում, համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում)	Դպրոցի նպատակների համար լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում	Տնօրեն, վարչական համակարգող	2023-2028	
15. Աշխատակիցների ստեղծագործական նախաձեռնության խթանում և խթանում	Աշխատակիցների ստեղծագործական կարողությունների զարգացում	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	2023-2028	
16. Կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում	Բարենպաստ ուսումնական միջավայրի ստեղծում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ	2023-2028 Մշտապես	
17. Դպրոցի հարակից տարածքում անվտանգ երթևեկության ապահովում՝ համագործակցելով պատկան մարմինների հետ	Սովորողների և աշխատակիցների տեղաշարժի անվտանգության ապահովում	Տնօրեն	2023-2024	
18. Հակահրդեհային պաշտպանության և աշխատանքի անվտանգության տեխնիկայի ապահովման բարելավում	Արտակարգ իրավիճակներում աղետների և վտանգների հակազդման մեխանիզմների ստեղծում	Տնօրեն, վարչական համակարգող	2023-2028	Դպրոցի բյուջե, պետբյուջե
19. Քաղպաշտպանության ուսումնական վարժանքների կազմակերպում, համագործակցություն ԱԲ ծառայության հետ	Արտակարգ իրավիճակներում վարքականոններին տիրապետում անձնակազմի և սովորողների կողմից	Տնօրեն, զինղեկ, ք/պշտաբի պետ	2023-2028 Ըստ ժամանակացույցի	
20. Հանրակրթական դպրոցների հաջողված փորձի ուսումնասիրում	Ուսումնական գործընթացի որակի բարձրացում	Տնօրեն, տնօրենի ուսումնական	2023-2028	

և դրանց որոշ տարրերի տեղայնացում		աշխատանքի գծով տեղակալ, մեթոդափակորումների նախագահներ		
21. Գեղարքունիքի մարզի ԿՄՍ ոլորտի միասնական կայքում դպրոցի ներկայացվածության ապահովում	Դպրոցի գործունեության հրապարակայնության ապահովում	Տնօրեն, օպերատոր	2023-2028 Մշտապես	
22. Դպրոցի պատմության, հաջողությունների, տաղանդավոր աշակերտների և անվանի շրջանավարտների, ուսուցիչների և բարերարների մասին պատմող օնլայն և առկա անկյունների ստեղծում	Դպրոցի անցյալի և ներկայի արժևորում	Տնօրեն, մանկավարժներ	2023-2028	

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը.

- Նորամուծությունների մերժում,
- Մոտիվացիայի ցածր մակարդակ,
- Ֆինանսների անբավարարություն,
- Համագործակցության մերժում,
- Ֆորս-մաժորային իրավիճակներ:

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.

- Հիմնավորել նորամուծությունների դեպքում սպասվող դրական արդյունքները ,
- Խրախուսանք,
- Բյուջեի, ֆինանսական միջոցների ռացիոնալ օգտագործում, փնտրել ֆինանսական աղբյուրներ,
- Ներկայացնել համագործակցության փոխշահավետ դրական կողմերը ,
- Գործողությունները պլանավորելիս հաշվի առնել հնարավոր խոչընդոտող հանգամանքները:

Ոլորտը՝

Ներառական ուսումնական միջավայր

Նպատակը՝

Ներառական կրթության պայմանների բարելավում և արդյունավետության բարձրացում

Խնդիրը՝

Թեև դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաներ չեն սովորում, սակայն դա չի նշանակում, որ վաղը դպրոցը ԿԱՊԿՈՒ երեխաներ չի ունենալու, այսինքն դպրոցը ֆիզիկական և մանկավարժամեթոդական առումներով պետք է պատրաստ լինի՝ ստեղծելով հարմարեցված միջավայր

<p>1. Շենքային պայմանների (թեքահարթակներ, սանհանգույցներ, սենյակներ, մարզադահլիճ, հանդիսությունների սրահ և այլն) հարմարեցում ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին</p>	<p>Ֆիզիկական մատչելիության ապահովում</p>	<p>Տնօրեն , համակարգող</p>	<p>2023-2028</p>	<p>Դպրոցի բյուջե, պետ բյուջե</p>
<p>2. Նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածության ապահովում</p>	<p>ԿԱՊԿՈՒ սովորողների համար ռեսուրս-սենյակի ստեղծում, համապատասխան ուսումնամեթոդական նյութերով և սարքավորումներով համալրում</p>	<p>Տնօրեն , համակարգող</p>	<p>2023-2028</p>	<p>Դպրոցի բյուջե, պետ բյուջե</p>
<p>3. Մանկավարժների և ներառական կրթության մյուս մասնակիցների կարողությունների զարգացում, փորձի փոխանակում, շարունակական աջակցության ապահովում, մեթոդական զինանոցի համալրում (համագործակցություն ՏՄԱԿ-ի , ՀՄԿ-ի , ուսումնական հաստատությունների հետ)</p>	<p>Ներառական կրթության ոլորտում աշխատակազմի գիտելիքների և հմտությունների ձևավորում , մեթոդական և գործնական առումով պատրաստվածություն</p>	<p>Տնօրեն, տնօրենի տեղակալներ</p>	<p>2023-2028</p>	
<p>4. Անհատական ուսումնական պլանների մշակման և կիրառման կարողությունների զարգացում</p>	<p>Մեթոդական և գործնական առումով պատրաստվածություն</p>	<p>Տնօրեն, տնօրենի տեղակալներ</p>	<p>2023-2028</p>	

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը.

- Ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտների հաղթահարման համար անհրաժեշտ ռեսուրսների և միջոցների բացակայություն,
- Ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտների հաղթահարում, կարծրատիպեր, վերաբերմունք:

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.

- Միջոցների տնտեսում, լրացուցիչ միջոցների հայթայթում,
- Հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ և երևույթներ՝ սովորողների և աշխատողների, ծնողների վարքագծում,
- ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, որպեսզի ձևավորվի այն գիտակցական վերաբերմունքը, որ բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց կարողություններից, կարիքներից և սոցիալական աստիճանից, դպրոցը ուսումնառության հավասար մասնակցային պայմաններ է ապահովում:

**ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ,
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Դպրոցի զարգացման ծրագրով նախատեսված և նպատակներով պայմանավորված գործողությունների իրականացման և դրանց արդյունքների գնահատման մեխանիզմները և չափանիշները պետք է համապատասխանեն հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության, ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատման չափանիշներին : Դպրոցի ներքին գնատմանը պետք է մասնակցեն խորհրդի անդամները, վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողները, ծնողները, ՏԻՄ-ի ներկայացուցիչները:

Զարգացման ծրագրի նպատակների համար իրականացված յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող պարզ և բարդ ցուցանիշների միջոցով՝ որպես գնահատման գործիքներ, պետք է ստուգվեն կատարողականները: Ուսումնասիրությունները և վիճակագրական տվյալները ցուցանիշների տեսքով պետք է արտացոլեն դպրոցի յուրաքանչյուր ոլորտի ընդհանուր պատկերը: Ստացված ցուցանիշները հնարավորություն են տալու ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները համեմատական կարգով վերլուծելու՝ զարգացման ծրագրի կատարման ընթացքը գնահատելու համար:

Որպես կանոն՝ դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը(տարեկան առնվազն 2 անգամ)՝ ներքին

գնահատման չափանիշների հաշվարկման մեթոդաբանությանը և հանրակրթության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Դպրոցը խորհրդին է ներկայացնում զարգացման ծրագրի հիման վրա կազմված տարեկան աշխատանքային պլանի հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվետվություն:

Գնահատման հիմնական ուղղություններն են՝

- Դպրոցի կարիքներով պայմանավորված ֆինանսական ռեսուրսների նպատակային պլանավորումը և օգտագործումը,
- Դպրոցի շենքի և տարածքի անվտանգ շահագործումը, անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերի ապահովումը, առողջության պահպանմանն ուղղված միջոցառումները,
- Սովորողների հոգևոր, ֆիզիկական, սոցիալական առողջության ուղղությամբ իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները,
- Սովորողների առաջադիմությունը և որակը՝ ուստարվա ընթացքում և դրա ավարտին աշակերտների առաջադիմության տվյալների, ընթացիկ, ամփոփիչ, արտաքին գնահատումների, ուսուցման մեթոդների վերլուծությունների արդյունքների հիման վրա,
- Ուսուցչական անձնակազմի դասավանդման համապատասխանությունը ներկայիս պահանջներին,
- Ուսումնական պլանի կազմման համապատասխանությունը՝ հանրակրթության պետական չափորոշչին, շահառուների կարիքներին, խորհրդի և խորհրդակցական մարմինների մասնակցությունը ուսումնական պլանի կազմման աշխատանքներին,
- Ներդպրոցական վերահսկողության համակարգի ուսումնասիրություն,
- Անհրաժեշտ ռեսուրսներին մանկավարժական աշխատողների հասանելիության ապահովում,
- Համայնքի հետ հարաբերությունների արդյունավետություն,
- Աշխատակազմի մասնագիտական զարգացման և կառավարման արդյունավետություն,
- Որակյալ ներառական կրթական միջավայրի և հավասարության ապահովումը,
- Դպրոցի ֆինանսական, նյութական ռեսուրսների արդյունավետությունը,
- Տնօրինության և սովորողների համագործակցությունը, նրանց մասնակցությունը դպրոցի գործունեությանը, աշակերտական խորհրդի գործունեությունը,
- Ծնողական խորհրդի գործունեությունը, համագործակցությունը տնօրինության, մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ,

- Դպրոցի ու համայնքի համագործակցությունը,
- Ներառական կրթության ոլորտում աշխատակազմի կարողությունները,
- Արտադասարանական ու արտադպրոցական գործունեությունը:

Գնահատման գործընթացը ենթադրում է 3 բաղադրիչ՝

1. Մեկնարկային, սկզբնական իրավիճակի գնահատում,
2. Գործունեության ընթացիկ գնահատում,
3. Գործունեության արդյունքների գնահատում:

Զարգացման ծրագրով սահմանված ուղղությունները ամբողջությամբ պետք է ներառվեն դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան : Խորհուրդը պետք է աջակցի դպրոցին՝ ճիշտ ուղղորդելու ֆինանսական միջոցների նպատակային ուղղությունների որոշմանը:

Ծրագրի կատարման ընթացիկ վերահսկողության ձևերն են՝

1. Զարգացման ծրագրի քննարկում և հաստատում մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդի կողմից,
2. Խորհրդի կողմից առնվազն տարեկան 2 անգամ՝ ուսումնական տարվա առաջին կիսամյակի և ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ավարտին ,տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրով և ժամանակացույցով նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկում և դրանց արդյունքների գնահատում,
3. Դպրոցի զարգացման ծրագրի ընթացքին, կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ներգրավումը,
4. Ըստ ընթացիկ և ներքին գնահատման արդյունքների՝ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում և համապատասխանեցում ստեղծված իրավիճակին:


Զարգացման ծրագրով նախատեսված յուրաքանչյուր գործողության համար մշակված վերահսկողության մեխանիզմները, սահմանված հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցերը պետք է հաստատվեն խորհրդի կողմից.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հաշվետվության ձևաչափին կցվելու են փաստացի տվյալներ , վերլուծություններ, հիմնավորող փաստաթղթեր՝ յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման վերաբերյալ.

N	Միջոցառում / գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ	Լրացումներ
---	----------------------------	--------------------	------------------	-----------------------------------	--	---	------------

					չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	կատարելու մասին առաջարկություններ	



Basic School No.4 
Недавно просмотренные